





# Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN  
NOW OPEN



Սեփականատեր  
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն  
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները  
ուտելիքներու վերաբերեալ

## IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING  
ROASTING FRESH NUTS  
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA  
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել  
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ  
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել  
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher  
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200  
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Հայ Դատի յանձնախումբերը մի՛շտ պատճառի վրայ

Գանատայի Հայ Դատի յանձնախումբի առաքելութեան հիմնական նպատակներէն է Արցախի հիմնահարցի լիարժէք լուծումը, որպէս Հայ Դատի բաղկացուցիչ մաս: Յունուար 25-ին, Գանատայի խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովը երկու առանձին նիստ գումարեց ու Ատրպէյճանի կողմէ Արցախի շարունակուող շրջափակման առնչութեամբ վկայութիւններու ու լուծումներու առիթ ստեղծեց:

Գանատայի խորհրդարանի ընդդիմադիր կուսակցութիւններու կողմէ միաձայնութեամբ նախաձեռնուած այս իրադարձութիւնը պատմականական անկիւնադարձային ձեռքբերում էր, որովհետեւ Գանատայի խորհրդարանին մէջ առաջին անգամ ըլլալով Արցախի Հանրապետութեան պետական ներկայացուցիչները հանդէս եկան ներկայացնելով Արցախի ու արցախահայութեան այսօրուան իրավիճակը, միաժամանակ՝ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւն ձեւակերպումը տեղ գտաւ յանձնաժողովի բանաձեւին մէջ, որ Արցախի անկախութեան ճանաչման գործընթացին գծով կարեւոր իրադարձում է, նկատի ունենալով, որ խորհրդարանի յանձնաժողովը մը նման բառակապակցութեամբ բանաձեւ որդեգրեց:

Պատերազմէն ետք Հայաստան կանգնած է ազգային անվտանգութեան բազմաբեկ մարտահրաւէրներու դէմ յանդիման: Հայրենիքի ինքնիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան կը սպառնայ թուրք-ատրպէյճանական յարձակողապաշտ քաղաքականութիւնը: 2020 թուականին Արցախի Հանրապետութեան դէմ սանձազերծուած թուրք-ատրպէյճանական պատերազմը իրողութեան մէջ փանթրեքալիան երկարամիջոց ծրագրի իրագործման մէկ օղակն էր եւ կը թիրախաւորէր ոչ միայն Արցախը, այլեւ Սիւնիքը, ի մասնաւորի Մեղրին: ՀՀ գործող իշխանութիւններու Արցախի գծով զիջումներու գահավէժ ընթացքով կը վտանգուի նաեւ Սիւնիքը, որուն համար հաշուեյարդարի քարոզչական նախապատրաստութիւնները ընթացքի մէջ են Պաքուի կողմէ, որ համակարգային ձեւով կեանքի կոչած է «Արեւմտեան Զանգեզուր»ի քարոզչական իր թեզն ու նորա-

թուի կեղծ քարտէսները:

Աշխարհաքաղաքական իրադարձութիւններու ներկայ պայմաններու լոյսին տակ, Հայկական կողմի նպատակային գերխնդիրը այսօր կը կայանայ միասնական ուժերով կանգնելու պատնէշներուն վրայ: Հայաստան-Արցախ-Սփիւռք համագործակցութեան վերընձիւղումն ու անոր ամրապնդումը այսօր աւելի քան երբեք անհրաժեշտ է, երբ Արցախն ու արցախահայութիւնը կը գտնուին գոյապահպանման խնդրին դէմ յանդիման եւ հայութեան տարբեր հատուածներու միջեւ փոխըմբռնման, համախմբուածութեան եւ միասնութեան միջոցառումի ապահովումը՝ յաւելեալ թափով կրնայ նպաստել Արցախի անկախութեան ճանաչման գծով Հայ Դատի աշխատանքներուն:

Արցախի շրջափակման հեռակայ նպատակը՝ Արցախի հայաթափման հանգրուանային գործընթացն է եւ այս մէկը կանխելու համար Եւրոպայէն մինչեւ Հարաւային Ամերիկա, Աւստրալիայէն մինչեւ Միացեալ Նահանգներ եւ Գանատա, Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան համար պայքարող Հայ Դատի յանձնախումբերը համընդհանուր զօրաշարժի մէջ են:

Գանատայի Հայ Դատի յանձնախումբը Օթթաուայի իր գրասենեակի եւ տարբեր քաղաքներու մէջ գործունէութիւն ծաւալած իր յանձնախումբերուն հետ միասին միշտ հանդէս եկած է Արցախի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան ու միջազգային յարաբերութիւններու գծով Արցախի պետական շահերու եւ իրաւունքներու պաշտպանութեան ճանաչման ուղղութեամբ լոպպիստական աշխատանքներու գծով իր դէմ ծառայած անյաղթահարելի բարդութիւններուն:

Որպէս սփիւռքահայ քաղաքական ու դիւանագիտական ներուժը համախմբող կառույց, աշխարհատարած Հայ Դատի յանձնախումբերու տասնամեակներու վրայ երկարող պատմական առաքելութիւնը ինքնին փաստ է, որ Հայ ժողովուրդի համազգային ու քաղաքական տեսլականներուն համար մաքառումի ճանապարհին յաղթանակներ կարելի է իրագործել կազմակուռ ու միասնական մեր շարքերով:

### Մոնթրէալի մէջ կայացած «Առաջնորդի ընթրիք»ը պսակուեցաւ աննախընթաց յաջողութեամբ

Տարիներու վրայ երկարող գեղեցիկ աւանդութեամբ մը, Ազգային Առաջնորդարանի հովանիին տակ գործող Մեծն Մոնթրէալի եկեղեցիներուն հոգեւոր եւ աշխարհական ծառայողները, ազգային բարերարներն ու Առաջնորդարանին բարեկամները, Շաբաթ, 28 Յունուար 2023-ի երեկոյեան, Հայ Կեդրոնի «Ահարոնեան» սրահին մէջ ի մի խմբուեցան Թեմի բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի հրաւերով, ուր հարազատ միջոցառումի մէջ բոլորեցին «Առաջնորդի Ընթրիք»ը՝ ի նպատակ Ազգային Առաջնորդարանին:

Աւանդական ընթրիքի երեկոն կը վայելէր Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը ու Տիկին Հերմինէ Մանուկեանի նախագահութիւնը: Ներկայ էին Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Տեսուչ Գերաշնորհ Տ. Սուրէն Արքեպիսկոպոս Գաթարոյեան, Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս Պարոն Լեւոն Աֆէյեան, Բեպէջի Խորհրդարանի անդամ Տիկին Սոնա Լախոյեան, Լաւալի Քաղաքապետարանի անդամ Տիկին Սեդա Թոփուզեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Տոքթ. Ժիրայր Պասմաճեան, հոգեւորականաց դասու Կրօնական Ժողովին եւ Ազգային Վարչութեան անդամներ, Ազգային Պատգամաւորներ, Ազգային Երեսփոխաններ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Շքանշանակիրներ, Գործակից Միութիւններու ներկայացուցիչներ եւ Ազգային Առաջնորդարանի առաքելութեան հաւատացող ու սատար հանդիսացող բարերարներ, բարեկամներ եւ ազգայիններ:

Երեկոն սկսաւ բարի գալուստի խօսքով, զոր արտասանեց օրուան հանդիսավարը Հոգեշնորհ Տ. Յակոբ Վարդապետ Եագուպեան: Բարի գալուստի խօսքէն ետք Հայր Սուրբը հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Հայր, որպէսզի կատարէ ճաշի օրհնութիւնը:

Յանուն Ազգային Վարչութեան ողջոյնի խօսք արտասանեց առնապետ Տիկին Ծովիկ Թէրզեան: Բարեշնորհ Վարուժան Սարկաւազ՝ Բարեշնորհ Յարութ Սարկաւազ եւ Բարեշնորհ Եսայի Սարկաւազ՝ Հոգեւոր, ազգային եւ ժողովրդական երգերով ճոխացուցին երեկոն:

Երեկոյթի ընթացքին, Բաբգէն Արքեպիսկոպոս կատարեց կարգ մը պարզեւտորումներ: Ազգային Առաջնորդարանի «Յովհան Մանուկեանի» շքանշանով պատուուեցան. Բարեշնորհ Պետրոս Սարկաւազ Զաքարեան, Տիկին Անի Եագուբեան, Տիկին Աստղիկ Էսմէրեան եւ Տիար Լեւոն Պէնկեան իրենց բազմամեայ անսակարկ ծառայողութեան համար:



Լուսանկարը՝ Արմէն Ալեմեանի

յուրութեան համար:

Իսկ, Արցախի 44-օրեայ պատերազմին Ազգային Առաջնորդարանի մարդասիրական աշխատանքներուն օժանդակող խումբ մը երիտասարդներ, արժանացան Առաջնորդ Սրբազան Հօր Գնահատագրին: Անոնք են. Տիկին Ռիթա Աղալլազ, Տիկին Թամար Ապրաքեան, Տիկին Արազ Եագուբեան, Տիկին Նանոր Թապալեան, Տիկին Մարիա Քէօսէյեան, Տիար Արթուր Թոթոեան, Տիար Արեգ Մարգարեան, Տիար Կարի Մինասեան (բացակայ) եւ Տիկին Սեդա Մարաշեալ (բացակայ):

Ապա, պատաստի վրայ ցուցադրուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր եւ Ազգային Առաջնորդարանի անցնող մէկ տարուան գործունէութիւնը լուսարձակի տակ առնող տեսանկարը մը:

Փակուեցաւ եւ Օրհնութեան խօսքին մէջ, Բաբգէն Արքեպիսկոպոս առաջին հերթին փառք տուաւ Աստուծոյ, ապա իր գնահատանքը յայտնեց երեկոյթին յաջողութեան համար գործող բոլոր անձերուն, անփոխարինելի նպաստ բերող բոլոր նուիրատուներուն եւ ներկաներուն, որոնք եկած էին զօրավիճակ ու քաջայեր հանդիսանալու Ազգային Առաջնորդարանին ու անոր ազգօգուտ ծրագրիներուն: Իր խօսքին մէջ, Բաբգէն Արքեպիսկոպոս թուեց կարգ մը իրագործումներ, որոնք կատարուած են Ազգային Առաջնորդարանի կողմէ, թէ՛ Գանատայի, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Արցախի մէջ:

Ընթրիքը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» օրհներգով:

### Արցախի ներկայացուցիչները Գանատայի Խորհրդարանին մէջ Ազգային Տեսլականի Զեղասպանական Յարձակումի Հետեւանքներուն Վերաբերեալ Փաստեր ներկայացուցած են

ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի տեւական աշխատանքներուն շնորհիւ 25 յունուարին Գանատայի Համայնքներու պալատի արտաքին յարաբերութիւններու եւ միջազգային զարգացման մնայուն յանձնախումբը գումարած է երկու առանձին նիստեր:

Նիստերը գումարուած են՝ համաձայն յանձնախումբին կողմէ նախորդ շաբաթ միաձայնութեամբ որդեգրուած որոշումին, որուն նախագիծը ներկայացուած էր «Պուր Բեպէջու» խմբակցութեան անդամ Սթեֆան Պերկերոյի կողմէ, որ պահանջած էր նուազագոյնը երեք հանդիպումներ, որոնց ընթացքին յանձնախումբի անդամները կարելիութիւն կ'ունենան լսելու Արցախի Հանրապետութիւնը ներկայացնող անձերու, ինչպէս նաեւ փորձագէտներու եւ գանատահայ համայնքի ներկայացուցիչներու:

Գանատական խորհրդարանին մէջ կայացած նիստերու բացառիկ բնոյթն ու պատմականութիւնը անոր մէջ է, որ առաջին անգամ ըլլալով Արցախի Հանրապետութեան պետական ներկայացուցիչները հանդէս եկան քանատական խորհրդարանին առջեւ եւ ներկայացուցին Արցախի բնակչութեան պայքարը յանուն արժանապատիւ կեանքի: Առաջին հանդիպումին մասնակցած են ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի համանախագահ Շահեն Միրաքեան, ղեկու. Թալին Փափազեան, Մի-

ացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչ Ռոպերթ Աւետիսեան եւ Արցախի մարդու իրաւունքներու պաշտպան Գեղամ Ստեփանեան: Երկրորդ հանդիպումին մասնակցած են «Միջազգային ճգնաժամային խումբ»-ի Հարաւային Կովկասի հարցերով աւագ վերլուծաբան Օլեգ Վարդանեան եւ Ուիննորի համալսարանի իրաւունքի փրոֆեսօր Քրիսթոֆըր Ուոլթըրը:

Հրաւիրեալները, իւրաքանչիւրը իր մասով հանգամանօրէն անդրադարձած են ստեղծուած կացութեան: Կարեւոր նկատուած է Գանատայի կողմէ Ազգային Տեսլականի միջազգային ճնշման իրականացումը, որպէսզի վերջինս վերջ տայ իր ցեղասպան քաղաքականութեան:

Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչները յանձնախումբի անդամներուն ներկայացուցած են իրական փաստեր՝ առնչուած մարդասիրական ծանր հետեւանքներու եւ Ազգային Տեսլականի ցեղասպանական յարձակումի հետեւանքներուն, ինչպէս նաեւ Արցախի Հանրապետութեան առաջնահերթութիւնները եւ ազատ ու անկախ կեանքի տեսլականը:

ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ԿԵՂՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

# Ընկհ. Արփի Սապունճեան. տիպար խաչուհի մը իր տիպար աշխատանքով

Թէեւ շատ անգամ ժյատ եղած ենք մեր գնահատումներուն մէջ, սակայն չենք մոռնար մեր կեանքը հարստացնող երեւոյթները, նախաձեռնութիւնները եւ նուիրեալները, որոնք որոշակի եւ իւրա-յատուկ աշխատելու ու տեսլականով վարակիչ օրինակ հանդիսացած են մեր ընկերութեան:

Իրերայաջորդ սերունդներուն կեն-սունակութիւնը ջամբող տրպարն էր ընկհ. Արփի Սապունճեան, որուն միու-թեան կեանքի վաստակը սուրիահա-յութեան պատմութեան մէջ ձգած է եր-կար տարիներու ծառայութեան հարուստ ժառանգ մը:

Ծնած է Հալէպ, 1936-ին: Նախնա-կան կրթութիւնը ստացած է Ազգ. Հայ-կազման վարժարանէն ներս, իսկ երկրոր-դական ուսումը՝ Քարէն Եփփէ Ազգ. ձեմարանէն ու դարձած անոր գիտական բաժնի Գ. Հունճքի շրջանաւարտներէն 1954-1955 կրթական տարեշրջանին, տնօրէնութեամբ պըն: Մինսա Թէօլէյեա-նի: Ամալերջի հանդէսին արտասանած է շրջանաւարտներու ուղերձը եւ վկայ-ուած Գերշ. Տ. Զարեհ Ս. Եպո. Փայասեա-նի ձեռամբ, որ Սրբազան Հօր վկայակա-նի վերջին տուճութիւնը կ'ըլլայ Հալէպի մէջ:

1956-ին կ'անդամակցի սուրիահայ Օգնութեան խաչին:

Յաջորդ տարի կը մեկնի Լիբանան եւ երկու տարի կը հետեւի մանկավար-ժութեան դասընթացներու Ecole Superieure Des Lettres-ի մէջ:

Շրջան մը Պէյրութի ձեմարանի Համազգայինի Մանկապարտէզէն ներս փորձառութիւն ձգելէ ետք Տիկ. Մալիք-եանի օրով, կը վերադառնայ Հալէպ եւ անմիջապէս կը ստանձնէ Ազգ. Հայկազ-եան վարժարանի մանկապարտիզպա-նուհի պաշտօնը մինչեւ 2009:

1960-ական թուականներուն Սուրիոյ քաղաքական ղեկավարու պատ-

ճառու, միութենական գործունէութիւն-ները որոշ չափով կը կասեցուին Հալէպի մէջ, սակայն կը շարունակուին անյե-տաձգելի աշխատանքները:

1962-ին, ընդառաջելով Սուրիա-կան պետութեան հրահանգին, ՍՕ Խաչը կ'ունենայ ընտրովի պետական վարչու-թիւն մը համառատու՝ ընկերային հար-ցերու եւ աշխատանքի գրասենեակի տնօրէնութեան: Յաջորդական վարչու-թիւնները կը շարունակեն իրենց թե-լադրուած պարտականութիւնները մին-չեւ 1965, երբ Ս.Օ. Խաչի Անդամական Ընդհ. ժողովին կողմէ կ'ընտրուի Պետա-կան նոր վարչութիւն մը, որուն մաս կը կազմէ ընկհ. Արփի Արպանեան Սա-պունճեան:

1965-ին երբ քաղաքական պայ-մանները աւելի ձեռնտու կ'ըլլան, ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւնը կ'որոշէ Պետա-կան եւ Շրջանային վարչութեան կազմե-րը համատեղել, զանոնք ընտրելով պե-տական ընդհ. ժողովին կողմէ: Այսպի-սով, ընկհ. Արփի Սապունճեան նոր կազ-մէն ներս կը ստանձնէ փոխ ատենապետի պաշտօնը ժողովականներ ունենալով:

— Ընկհ. Վազգէն Սէլեան ատենա-պետ

— Ընկհ. Արփի Սապունճեան փոխ ատենապետ

— Ընկհ. Ֆիմի Տէր Յակոբեան ատենապետ

— Ընկհ. Հելէն Սապունճեան հաչ-ուսպահ

— Ընկհ. Սարգիս Զոլոյեան գանձա-պահ

Հետագային յիշեալ կազմը կը հա-մալրուի եւ վարչական կ'ըլլան հետեւեալ ընկեր-ընկերուհիները մինչեւ 1982.

— Ընկհ. Զապէլ Յակոբեան

— Ընկհ. Կարպիս Դերձակեան

— Ընկհ. Սեղա Հալլանեան

— Ընկհ. Շուշիկ Ստեփանեան

— Ընկհ. Ալիս Գաթրճեան



— Ընկհ. Ասողիկ Իւլիպէյեան

1977-ին ընկհ. Արփի առաջին ան-գամ ըլլալով կը վարէ ՍՕ Խաչի տեսա-պետի պաշտօնը:

1982-ին երբ Սուրիոյ քաղաքական պայմանները աւելի ձեռնտու կ'ըլլան, ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւնը ՀՕՄ-ի համագաղութային կառոյցը պահպանե-լու եւ անոր տրամադրութիւնները իրա-գործելու առաջադրանքով կը կազմա-կերպէ խորհրդատու ժողով մը, ուր կ'որոշուի գումարել ՍՕ Խաչի 18-րդ Պատգամա-ւորական ժողովը 21 Յուլիս 1983-ին, Համազգայինի «Նիկոլ Աղբալեան» սրահէն ներս, ներկայութեամբ՝ ՀՕՄ-ի Կեդր. Վարչութեան Միջին Արեւելքի ներկայացուցիչ՝ ընկհ. Ալիս Փափազեա-նի:

Ծանօթ.- 17-րդ ժողովը գումար-ուած էր 1962-ին:

Յիշեալ ժողովին կ'ընտրուի ինը ընկերուհիներէ բաղկացած կազմ մը ատենապետութեամբ ընկհ. Արփի Սա-պունճեանի:

Պատմական այդ ժամանակաշրջա-նէն սկսեալ հերթականօրէն կը շարու-նակուին ՍՕ Խաչի Պատգամաւորական ժողովները երկու տարին անգամ մը: Այսպիսով 1983-1989 (երեք շրջան) ըն-կերուհի կը վարէ ՍՕ Խաչի Շրջ. Վար-չութեան ատենապետի պաշտօնը:

1983-ին առաջին անգամ ըլլալով ՍՕ Խաչը կը մասնակցի ՀՕՄ-ի համա-հայկական 61-րդ պատգամաւորական ժողովին, Փարիզ, հետեւեալ ընկերուհի-ներով.

— Ընկհ. Արփի Սապունճեան

— Ընկհ. Ալիս Գաթրճեան

— Ընկհ. Սիրվարդ Կարպուշեան

1986-ին, ՀՕՄ-ի Համահայկական 62-րդ Պատգամաւորական ժողովին, ըն-կերուհի դարձեալ կը ներկայացնէ ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւնը այս անգամ Ամերիկայի մէջ:

1988-ին, ՍՕ Խաչի Մայրերու Օր-ուան տօնակատարութեան ընթացքին ընկհ. Արփի Սապունճեան կը պարգե-ւատրուի Միութեան «Կանթե» շքան-շանով:

1992-ին, կը մասնակցի ՀՕՄ-ի Համահայկական 64-րդ Պատգամաւ-րական ժողովին, Երեւան, դարձեալ ներ-կայացնելով ՍՕ Խաչի Շրջ. Վարչու-թիւնը:

1995-ին, ՀՕՄ-ի Համահայկական 65-րդ Պատգամաւորական ժողովին, Լոս Անճելոս, առաջին անգամ ըլլալով Սուր-իան կ'ունենայ իր ներկայացուցիչը ՀՕՄ-ի Կեդր. Վարչութեան մէջ եւ իր բացակայութեան ընկհ. Արփի Սապունճե-ան կ'ընտրուի ՀՕՄ-ի Կեդր. Վարչու-թեան անդամ:

1996-ին ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթո-ղիկոսի Հովուապետական անդրանիկ այ-ցելութեան ընթացքին, ՍՕ Խաչի հինգ վաստակաշատ ընկերուհիներ կը պարգե-ւատրուին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողի-կոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

— Ընկհ. Գոհարիկ Համայեան

— Ընկհ. Արփի Սապունճեան

— Ընկհ. Անահիտ Խուպրարեան

— Ընկհ. Ֆիմի Տէր Յակոբեան

1998-ին ընկհ. Արփին կը մասնակ-ցի ՀՕՄ-ի Համահայկական 66-րդ Պատ-գամաւորական ժողովին, Նիւ Ճըրզի մէջ, որպէս ՀՕՄ-ի Կեդր. Վարչութեան անդամ:

2001-ին, ՀՕՄ-ի Համահայկական 67-րդ Պատգամաւորական ժողովին, Աթէնքի մէջ, կրկին որպէս ՀՕՄ-ի Կեդր. Վարչութեան անդամ:

2004-ին, կը մասնակցի Ուղեկից Միութիւններու Խորհրդատու լիբա-նանի մէջ: Նոյն տարին մաս կը կազմէ ՀՕՄ-ի Միջին Արեւելքի Խորհրդատու-վին:

2005-ին կը մասնակցի ՀՕՄ-ի 100-ամեակի Հիմնադրամի հիմնադր-ժողովին, Կիպրոսի մէջ Նիկոսիա, եւ ՀՕՄ-ի 68-րդ Պատգամաւորական Ժո-ղովին քուէարկուած բանձնէի հիման վրայ, ընկերուհի կը գլխաւորէ ՍՕ Խա-չի դրամահաւաքի յանձնախումբը:

2008-ին, կը մասնակցի ՀՕՄ-ի Համահայկական 69-րդ Պատգամաւ-րական ժողովին Երեւանի մէջ, որպէս հրաւիրեալ ՀՕՄ-ի Կեդր. Վարչութեան կողմէ:

2010-ին, Ս.Օ. Խաչի Հիմնադրու-թեան 90-ամեակին առթիւ կ'արժանա-նայ ՀՕՄ-ի 50 եւ աւելի տարիներու ծառայութեան գնահատագրին, որպէս անձնուրաց խաչուհի:

2011-ին, կը պարգեւատրուի Հա-յաստանի Գերագոյն Մարմնի Ազատա-մարտիկներու Յանձնախումբի «Մայրա-կան Երախտագիտութեան» մետալով առ ի գնահատանք Արցախի մէջ կատարած իր ծառայութիւններուն:


Տեղին է նշել, թէ վերոյիշեալներու կողքին ընկերուհիներ հիմնական գործու-նէութիւնը ցոյցացած է կառուցել Ս.Օ. Խաչի ընկերաբժշկական կեդրոնի շէնքը Հալէ-պի մէջ: Որոշումը գինք դրած է հսկայ պատասխանատուութեան առջեւ, որպէս ատենապետութիւն, գործակից ունենալով իր ժողովական ընկերուհիները եւ հա-մայնքի բարեբարները, որոնց գոհողու-թեան, տոկոսնութեան եւ անձնուրու-թեան արգասիքն է ընկերաբժշկական մեր կեդրոնը:

Այսօր, ՍՕ Խաչի այս կառոյցը իր գործող կեդրոնով, տարածուն գործունէ-ութեամբ, մասնաճիւղերու համակարգով եւ անդամուհիներու նուիրումի պատ-ուաբեր վաստակով, պերճախօս վկան է Օգնութեան Խաչին, որուն մեծագոյն օրինակն էր ընկհ. Արփի Սապունճեան, իր ընդունակութիւններով, միութենա-կանի գիտակցութեամբ եւ ծառայութեան հմտութեամբ, դառնալով եզակի անձնա-ւորութիւն մը, որ վայելց խաչուհիներ-ուն եւ համայնքին յարգանքը, որպէս մանկավարժ, ազգային գործիչ, միութե-նական եւ ընտանիքի մայր:

2012-ին ընկերուհի մեկնեցաւ Սուրիայէն նախ Լիբանան, ապա Գանա-տա, ուր 11 Յունուար 2023-ին կնքեց իր մահկանացուն:

Հոփի Կանանեան

**ՀՅԴ ԳԵՄ-ի անդամ Լարա Թերզեան Արցախի մասին կը զեկուցէ Պրիթիշ Գոլոմպիոյ Երիտասարդական Խորհրդարանի 94-րդ նիստին**



ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան (ԳԵՄ) Վանգուվըրի «Ար-չաւիր Շիրակեան» մասնաճիւղի անդամ Լարա Թերզեան Պրիթիշ Գոլոմպիոյ տարածքէն 97 երիտասարդ (16-21 տարեկան) անհատներէն մէկն էր, որոնք ընտրուած էին մասնակցելու Պրիթիշ Գոլոմպիոյ Երիտասարդական Խորհրդա-րանի 94-րդ նիստին, որ տեղի ունեցաւ տեղւոյն Վիքթորիայի Օրէնսդիր շէն-քին մէջ, Սուրբ Ծննդեան տօնական օրերուն ընթացքին:

Երիտասարդ խորհրդարանականները 5 օրուան ընթացքին ծանօթացան խորհրդարանական ժողովրդավարական գործընթացին, համայնքային աշխա-տանքներուն եւ ընկերային արդի խնդիրներուն:

Լարա Թերզեան մի քանի անգամ անդադարձած է 12 Դեկտեմբերէն սկսեալ Ատրպէյճանի կողմէ իրագործուած շրջափակման մասին, Արցախի Հանրապե-տութեան ընդհ հայ ժողովուրդին մարդկային իրաւունքներուն ոտնահարման, ինչպէս նաեւ տակաւին շարունակուող յարձակապաշտութեան, մարդկային եւ ինքնորոշման իրաւունքներու ժխտման հարցերուն Արցախի մէջ:

Ան ներկայանալու ուշադրութիւնը հրաւիրած է Արցախի եւ Լաչինի միջանց-քի շրջափակման թուրք-ազերիներուն կողմէ եւ անոնց իրականացուցած ոտնձգութիւններուն Արցախի 120.000 բնակիչներուն հանդէպ, որոնցմէ 30.000-ը երեխաներ են եւ 9000-ը՝ հաշմանդամներ:

Թերզեան յորդորած է իր ընկերները չանտեսել Արցախի ժողովուրդին մարդկային իրաւունքները, որոնք ոտնահարման կ'ենթարկուին ոչ միայն շրջափակման վերջին 50 օրերուն ընթացքին, այլ ատրպէյճանական բռնապե-տութեան կողմէ շարունակաբար իրագործուող ցեղասպանութեանց եւ ցեղային զտումներուն պատճառաւ:

Այցելեցեք [hitunes.ca](https://hitunes.ca) կայքէջը եւ օրական 24 ժամ ունկկոնցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

**HITUNES.CA**

Ունկկոնցեք [triktrak.ca](https://triktrak.ca) կայքէջի հայկական համացանցային ռաւտիոմով երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ, ժամը 8:00 - 9:00 լսեցեք շաիեկան հարցազրոյցներ

**TRIKTRAK.CA**

# Փաշինեան կը վախճայ դիմադրող հայ երիտասարդութեան

Նիկոլ Փաշինեան, հաւատարիմ իր ազգակործան քաղաքականութեան, անշեղօրէն կը շարունակէ իր աղետալի ընթացքը հաւասարապէս արտաքին եւ ներքին մակարդակներու վրայ:

Ազերիէն ու Թուրքէն խաղաղութիւն մուրացող Փաշինեան, սլաքները լարած է դիմադրող հայ երիտասարդութեան դէմ, որմէ այնքան կը վախճայ եւ ստոր քայլերով կը յաւակնի գայն լուսնային, թուլացնել եւ չէզոքացնել:

Ամիսներ առաջ կ'արգիլուէր Հ.Յ.Դ. դեկավարներու եւ Հ.Յ.Դ. Հոլանտայի «Գարեգին Նժդեհ» երիտասարդական միութեան անդամ Սիւնէ Աբրահամեանի մուտքը Հայաստան: Այս անգամ, Ֆրանսայի «ՀՅԴ Նոր Սերունդ» երիտասարդական միութեան ատենապետ Նժդեհ Գարագաւորեանի մուտքի արգիլումով, Փաշինեան կը փորձէ հարուածել Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի տարածքին յանուն Արցախի թուրքին եւ ազերիին դէմ պայքարող հիմնական երիտասարդական կազմակերպութիւնը:

Ընդլայնելով ծիրը, կ'արժէ քննել հայ երիտասարդութեան նկատմամբ Նիկոլ Փաշինեանի կիրարկած քաղաքականութիւնը, եւ այս ուղղութեամբ իր գործած անհամար սխալներն ու դաւադրական քայլերը աւելցնել իր այնքան հարուստ ամբաստանագրին վրայ:

Անառարկելի է որ Փաշինեանը ամէն դնով կը փորձէ բխցնել Հայ երիտասարդութեան զգօնութիւնը, դիմադրողականութիւնը եւ պայքարելու կամքը:

Օրինակները շատ են. Զարեհ Սիւնեանի կոչեցեալի անհեթեթ ծրագրերնեք միջոցաւ, ան կը փորձէ սփիւռքի երիտասարդութիւնը պառակտել, եւ ուսուցիչ հանգամանքներով ու «նորարար» դաստիարակութեամբ անոնց մէջ սերմանել ապագային տրամադրութիւններ:

Ասոր գուգահեռ, Փաշինեան կազմաքանդեց եւ կը շարունակէ թուլացնել Հայկական բանակը, եւ այնպիսի վիճակ կը ստեղծէ, որ հայրենիքի ապահովութեան ծառայելը պատուհաս նկատուի երիտասարդութեան կողմէ: Վկայ ամբողջ սերունդ մը որ գոհուեցաւ իր սխալ քաղաքականութեան եւ 44-օրեայ պատերազմը դիտաւորեալ չկազմակերպելու պատճառաւ: Կորուստներու ցանկը կը համալրուի Ազատ դիւղի նորագոյն ողբերգութեամբ:

Նիկոլ Փաշինեանի մասին Արցախի երիտասարդութեան կարծիքին արդեօք կ'արժէ անդրադառնալ, եւ այդ յարաբերութեան որակին մասին փաստեր ներկայացնել: «Արցախը հայաստան է եւ վերջ» յայտարարող եւ իր իւրաքանչիւր խօսքին մէջ հայ երեխաներուն «երջանիկ ապրելու» տուտ խոստումներ տուող խեղդատակը կարող է արդեօք ձեռնածուի աճապարտութեամբ համոզել Արցախի երիտասարդութիւնը եւ 30.000 շրջափակուած երեխաները, որ անոնց երջանկութեան համար ինք իսկապէս մտահոգ է:

Նիկոլ Փաշինեանի հակադաշնակցական մուտքին ի պատասխան, ՀՅԴ երիտասարդութիւնը իր գործունէութեամբ կը վերահաստատէ որ,

— Նիկոլի այս դաւադիր քայլերը գինք պիտի չչեղեն հակաթուրք եւ հակաազերի պայքարէն

— Պիտի շարունակէ գործել ի խնդիր Արցախի եւ Սիւնիքի հզօրացման, եւ առհասարակ Հայաստանի անվտանգութեան ապահովման:

— Այս պայքարի առաւել արդիւնաւէտութեան համար, Նիկոլի հեռացումը կը մնայ հրամայական եւ այս ուղղութեամբ իր աշխատանքը թափով պիտի շարունակուի:

— Բռնաճնշուած ու անիրաւուած Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի երիտասարդութեան միասնական պայքարը անհրաժեշտ է կասեցնելու ազգի զահավիժումը: ՀՅԴ երիտասարդականը ստանձնած այս պատասխանատուութեան իր բաժինը:

ՀՅԴ երիտասարդականի բազմաթիւ անդամներու բանտարկութեան, հայրենիք մուտքի արգիլումը, բռնաճնշումի եւ հալածանքի որոշումները բնաւ պիտի չկասեցնեն այս ընթացքը:

Յովսէփ Տէր Գեորգեան  
ՀՅԴ Բիւրոյի անդամ

## Հայաստանի Իշխանութիւնները Կ'արգիլեն ՀՅԴ «Նոր Սերունդ» Երիտասարդական Միութեան Կեդրոնական Վարչութեան Ատենապետին Մուտքը



ՀՅԴ Բիւրոյի երիտասարդական գրասենեակը հաղորդագրութեամբ մը կը տեղեկացնէ, որ առանց որեւէ պատճառաբանութեան, այս անգամ Հայաստանի համար անբաղձալի անձ նկատուած է Ֆրանսայի ՀՅԴ «Նոր Սերունդ» երիտասարդական միութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Նժդեհ Գարագաւորեան:

Գարագաւորեան պէտք էր Հայաստան այցելէր 6-10 փետրուարին Սիւնիքի մէջ տեղի ունենալիք ՀՅԴ երիտասարդական համաշխարհային համագումարին մասնակցելու: Համագումարին պիտի համախմբուին աշխարհի չորս ծագերէն ՀՅԴ-ի երիտասարդական միաւորներու ներկայացուցիչներ՝ միասնաբար ծրագրելու դաշնակցական երիտասարդութեան յառաջիկայի գործունէութիւնն ու ընելիքները:

Յիշեցնենք, որ ամիսներ առաջ Հայաստանի համար անբաղձալի անձեր նկատուեցան ՀՅԴ-ի դեկավարներ եւ ՀՅԴ Նետերլանտներու «Գարեգին Նժդեհ» երիտասարդական միութեան անդամ Սիւնէ Աբրահամեան, կրկին առանց որեւէ բացատրութեան:

**Voyages HAIG Travel**

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...**

**ԼՄԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

\*Նոր Յասցէ՝ **PERMIS DE QUÉBEC**

Voyages Haig Travel  
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Tel: + 1 514-284-7676  
Email info@haigtravel.ca

**Ghadir Meat & Restaurant**

T. 416-750-7404  
T. 416-750-7400  
1848 Lawrence Avenue E.  
Scarborough, ON M1R 2Y4  
E-mail: info@ghadirmeatmarket.com

**Sutton**

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage  
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M9

**Annie Varbedian**  
Sales Representative

Direct: (416) 918-3615  
Office: (416) 739-7200  
Fax: (416) 739-9367  
annievarbed@hotm.com  
www.suttongroupadmiral.com

**kabawat**

FOR CONTRACTING  
(437) 213-2999

13 Kerrison Drive West  
Ajax, Ontario  
L1Z 1K1

**ARZ fine foods**

The Essence of Mediterranean Gourmet Since 1989

Website: arzfinefoods.com  
Email: info@arzfinefoods.com

Scarborough Location  
1909 Lawrence Ave E,  
Scarborough, ON M1R 2Y6  
(416) 755-5084

Mississauga Location  
720 Bristol Rd W,  
Mississauga, ON L5R 4A5  
(905) 502-9292

**Haroot Sepan**

T +1 (416) 900 8626  
F +1 (416) 900 8659  
C +1 (416) 939 1895

haroot@araratfoods.com  
www.araratfoods.com

Ararat Trading (2002) Corp  
5820 Kennedy Rd Mississauga,  
ON L4Z 2C3 CANADA

**hearing aid source**

**Andre Ayzazyan HIS B.A.S**

andre@HearingAidSource.ca  
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

**Gary Chahinian** President, Broker of Record  
416-258-8892

**Gabriel Chahinian** Sales Representative  
647-580-5818

The Diamond Realty

**I.D.A.**

Part of the **Reckitt** family of pharmaceuticals.

Pharmacists  
**Sarkis Balian**  
**Vartan Balian**  
**Maral Abdalian Balian**

**Cassandra Pharmacy Inc.**  
2040 Victoria Park Ave.  
Toronto, Ontario  
M1R 1V2

Tel.: **416.449.2040**  
Fax: **416.449.2048**

**ANI BAKERY**

ԱՆԻ ՓՈՒՊԱՆ

**Middle Eastern Pizza**  
**Lahmajoun**

**ARSEN DABBAGHIAN**

25 Howden Road, Unit #2  
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

# Ի՞նչ է Բերձորի Միջանցքի Բացման Հայաստանեան Քաղաքականությունը

Արցախի պաշարումին 56-րդ օրն է. բազմաթիւ յայտարարութիւնները, դատապարտումները ոչինչ փոխած են անազանգիւր կացութեանէն: Արդարութեան միջազգային ատենանի քննարկումները եւս մնացին անհետեւանք: Ստեղծուած կացութիւնը կը գտնուի փակուղային վիճակի մէջ:

Քանի մը օր առաջ, խորհրդարանական ընդդիմադիր ուժերը կազմակերպած էին լսումներ Բերձորի միջանցքին մասին: Հաւաքուած էին, խորհրդարանին մէջ, մտաւորականներ, հասարակական գործիչներ, քաղաքական դէմքեր ու քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներ: Կը մասնակցէր նաեւ Քաղաքացիական պայմանագիր խմբակցութեան անդամ Գուրգէն Արսէնեանը: Մինչ մասնակիցները այլազան մօտեցումներով կը վերլուծէին ստեղծուած ահազանգային վիճակը եւ կը փորձէին լուծումներ առաջադրել, Գուրգէն Արսէնեան խորխտ շեշտով մը ներկայներուն տեսակէտ ունենայլու իրաւունքը մերժեց ու յայտարարեց, որ գործող իշխանութիւնը կ'ընէ ինչ որ անհրաժեշտ է: Ելոյթէն կը բխէր այն կարծիքը, որ իշխանութիւններուն կրաւորական կեցուածքը նպաստաւոր է Հայաստանի Հանրապետութեան ապահովութեան համար: Լոբելեայն ընդունելով Հայաստանի իսկ վտանգուած ըլլալը, Գուրգէն Արսէնեան աներկբայ կը յայտարարէր, որ Արցախի մէջ պաշարուած 120.000 հայերու ապահովութիւնը պէտք է զոհել, ի խնդիր Հայաստանի 3 միլիոն հայերու ապահովութեան:

Զանց կ'առնեմ նման անբարիշտութեան մը պատճառած աղմուկը, բողոքը եւ կշտամբանքը: Նոր չէ սակայն այս դիրքորոշումը: Այն օրէն (Փրակայի քառակողմ հանդիպում), երբ Նիկոլ Փաշինեան ընդունեց Ազրպէյճանի հողային ամբողջականութիւնը Արցախով հանդերձ, Հայաստանի իշխանութիւններուն համար Արցախի վերաբերող ամէն հարց Ազրպէյճանի ներքին հարց է. ուրեմն, Արցախի քաղաքացիները պէտք է իրենց պատկանած պետութեան, Ազրպէյճանի իշխանութիւններուն, հետ լուծեն իրենց տարակարծութիւնները:

## ՀՅԴ... Սկիզբը էջ 1

ւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Գառնիկ ՔՏՆ. Գոյունեանի, ՀՅԴ Բիւրոյի անդամներու Ռաֆֆի Տօնապետեանի, Յրանսայէն յատուկ այդ առթիւ ժամանած Մուրատ Փափագեանի եւ Ամերիկայէն ինժեան Մկրտիչեանի, ՄԴՀԿ եւ ՌԱԿ կուսակցութիւններու ներկայացուցիչներուն, Լաւալի Շոմէտի շրջանի երեսփոխան Սոնա Լախոյեանի, Մոնթրէալի Քաղաքապետարանի խորհուրդի անդամ Սան Լորան շրջանէն Վանա Նազարեանի, Լաւալի Քաղաքապետարանի անդամ Ռենօ շրջանէն Սեդա Թոփուզեանի, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէութեան անդամներուն, քոյր միութիւններու եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներու եւ հոծ բազմութեան:

Հանդիսութեան բացումը կատարեցին ՆՄԸՄ-ի սկսուածներ Գանատայի եւ Հայաստանի օրհներգներով, որմէ ետք բացման խօսքով հանդէս եկան օրուան բեմավարներ Յակոբ Հատիտեան եւ Եսենիա Քելլէեան: Անոնք նախ ողջունեցին ներկաները, ապա յաջորդաբար ըսին. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ծնունդ առաւ ժողովուրդէն, հիմնուեցաւ փրկելու համար հայ ժողովուրդը ստրկութենէ եւ անոր ապահովելու արժապատուօրէն ապրելու պայմաններ», «Այսօր մենք դարձեալ դէմ յանդիման կը գտնուինք նոյն վայրագ ու բարբարոս թուրքին: Արցախի շրջափակումը Ատրպէյճանի նորագոյն փորձերէն մէկն է բնաջնջման ենթակելու Արցախի մեր ժողովուրդը, բայց մենք ամէն ձեւով թեւ-թիկունք պիտի կանգնինք Արցախի մեր քոյրերուն ու եղբայրներուն»:

Հանդիսութեան յայտագիրը սկսաւ ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան Մոնթրէալի «Դրօ» եւ Լաւալի «Գետաչէն» մասնաճիւղերու պատանիներուն Պատանեկան Միութեան խոստումնալի կատարմամբ, գլխաւորութեամբ մասնաճիւղերու գլխաւոր վարիչ դաստիարակ Մոսիկ Արզումանեանի, որ յորդորեց պատանիները հաւատարիմ ըլլալու իրենց կատարած ուխտին եւ պատրաստ ըլլալու անսակարկօրէն ծառայելու հայրենիքին ու հայ ժողովուրդին:

Ապա բեմ բարձրացաւ ՀՅԴ ԳԵՄ-ի «Լեւոն շանթ» եւ «Բեկոր Աշոտ» մասնաճիւղերու վարչութեան ատենապետուհի Թալիա Ճապրայեան փոխանցելու ԳԵՄ-ի խօսքը, որուն մէջ ըսաւ. «Ճիշդ է, որ այս պահուն, մեզի կը թուի, թէ մեր պայքարը աւելի ու աւելի դժուարացած է, բայց ճիշդ այդ պատճառով է, որ այն աւելի քան երբեք անհրաժեշտ է: Ձեմ կարծեր, որ երբեւէ աւելի լաւ ժամանակ եղած է ԳԵՄ-ի շարքերուն միախառն, որովհետեւ հիմա է, որ հայ ազգին պէտք է դաշ-

Գուրգէն Արսէնեան կ'ըսէ, որ ժողովուրդը իր քուէարկութեամբ մեծամասնութիւն մը գոյացուցած է, որուն յառաջացուցած իշխանութիւնը կը գործէ ինչպէս ինք յարմար կը դատէ: Փոքրամասնութիւնը, որ ըստ իրեն մերժուած է ժողովուրդին կողմէ, դիրքորոշում ունենայլու, գանգատելու, բողոքելու, նոյնիսկ լսումներ կազմակերպելու իրաւունք չունի: Ան բառացիօրէն կ'ըսէ ընդդիմադիրներուն, որ երբ մեծամասնութիւն կազմեն, իրաւունք կ'ունենան կատարելու այն, որ կը փափաքին: Գուրգէն Արսէնեան կը մոռնայ, որ ընտրութիւններու առիթով մասնակից ուժերը ընտրական ծրագիր կը ներկայացնեն, որուն հիման վրայ է, որ ժողովուրդը ձայն կու տայ իրենց: Կը մոռնայ, անշուշտ կամաւորապէս, որ Քաղաքացիական պայմանագիր կուսակցութեան ընտրական ծրագիրը Հայաստանը կը հռչակէր Արցախի անվտանգութեան երաշխաւոր ու կը պահանջէր Արցախի ինքնորոշման իրաւունքի յարգումը: Այժմ, իշխանութիւնը կը խուսափի ինքնորոշման իրաւունքի յարգումը: Այժմ, իշխանութիւնը կը խուսափի ինքնորոշումէն, իսկ անվտանգութիւնն այլ վստահած է Ազրպէյճանին:

Հանրային քննարկման նիւթ դարձաւ նաեւ Ռուսիոյ Դաշնութեան արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրովի յայտարարութիւնը մամուլի ասուլիսի մը ընթացքին: Լաւրով կ'ըսէ, որ հայերը գրաւած էին Ազրպէյճանի պատկանող եօթը շրջաններ եւ չէին համաձայնեցրած վերադարձնել: Ազրպէյճան գտնուող պատերազմով վերադարձուց: Ռուսիա պատրաստ է օժանդակելու Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ տարակարծութիւններու լուծման, սակայն Հայաստան կը խուսափի բանակցելէ: Եթէ Հայաստան համաձայնի, ՀԱՊԿ-ի դիտորդական առաքելութիւնը քանի մը օրէն կը տեղակայուի Հայաստանի մէջ: Հայաստան նախընտրութիւնը կու տայ Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութեան, որուն երկու հարիւր անդամներ կը պատրաստուին երկու տարուան համար տեղակայուիլ Հայաստանի եւ Ազրպէյճանի սահմանին: Ասիկա չէ միայն Լաւրովի յայտարարութեան

էութիւնը: Նկատելի է, որ Լեւոնային Դարաբաղի ինքնավար մարզին մասին խօսք չկայ այս յայտարարութեան մէջ: Իսկ ինչ է Հայաստանի ակնկալութիւնը Ռուսիայէն: Հասկնալով հանդերձ, որ երկու երկիրներուն միջեւ միջնորդի դերը կը պահանջէ կողմնակալութենէ գերծ դիւանագիտական խօսելաձեւ, բայց եւ այնպէ՞ս, յարձակման պարագային ռազմավարական դաշնակիցը իրաւունք ունի ակնկալելու համապատասխան վերաբերում, այսինքն՝ նուազագոյնը յարձակողը մատնանշող, եթէ ոչ դատապարտող կեցուածք: ՀԱՊԿ-ի որոշ անդամներ կրնան ատիկա չընել, սակայն Ռուսիա պարտաւոր է ընելու:

Ռուսիոյ թերացումը պատճառ դարձաւ Հայաստանի կողմէ այլ միջնորդի փնտնտուքին: Եւրոպական Միութիւնը կրցաւ օգտագործել առիթը, Ռուսիոյ ազդեցութեան գօտիին մէջ ներկայութիւն մը ապահովելու համար: Հիմա, տագնապը լուծելու համար, ունինք կրկնակի միջնորդներ, որոնք համաշխարհային դիւանագիտութեան թոհուրէն մէջ հակադրուած են իրարու: Հայաստան դարձաւ հետզհետէ խորացող հակամարտութիւններու թատերաբեմերէն մէկը: Եւրոպական դիտորդական առաքելութեան տրուած երկու տարուան ժամկէտը ցուցանիչ է, որ հայեւազրպէյճանական տագնապը շուտափոյթ լուծում չունի:

Լսումներու ընթացքին քաղաքական գործընթացի արմատական փոփոխութիւնը շեշտուեցաւ բազմաթիւ բանախօսներու կողմէ: Իրենց հակասութիւններուն մէջ խճճուած իշխանութիւնները չեն կրնար ելք գտնել իրենց իսկ ստեղծած անկէն: Փոփոխութիւնը ազգային տեսակէտէ հրամայական է: Ազգային ուժերու համախմբումը՝ անշրջանցելի: Բանախօսներուն մէջ գտնուեցան աճապարողներ ու շուտափոյթ լուծումի ջատագովներ: Եթէ անմիջական լուծում ապահովելու ընտրանքը արկածախնդրական է, սակայն լուծումի առաջնորդող քայլերու որդեգրումը հրամայական է:

## ՏԻԳՐԱՆ ԺԻՆՊԱԾԵԱՆ

Եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու բացումի հեռանկարի մղձաւանջը: «Մենք զայրացած ենք, որովհետեւ Փաշինեան Հայաստանի ժողովուրդը բաժնած է սեւերու եւ սպիտակներու, ժողովուրդի եւ ընտրանիներու, ներսի հայերու եւ դուրսէն եկածներու: Մենք զայրացած ենք, որովհետեւ ան վարած է Սփիւռքը պառակտելու քաղաքականութիւն՝ լիազօրելով եւ միջոցներ սրամազրելով այնպիսի կազմակերպութիւններու, որոնց ղեկավարները ոչ մէկ օրինականութիւն կը վայելին Սփիւռքի դեկը իրենց ձեռքը առնելու: Մենք զայրացած ենք, քանի Արցախի պատերազմը հրահրել է ետք, Հայաստանի ղեկավարը չէ ստանձնած իր պարտականութիւնները: Մենք զայրացած ենք, որովհետեւ երբ Ատրպէյճան 40 օրէ ի վեր Արցախի դէմ կիրառած է մարդասպան շրջափակում, Հայաստանի վարչապետը ակնյայտօրէն ձգած է Արցախը իր ճակատագիրին: Մենք զայրացած ենք, քանի Հայաստանի իշխանութիւնները Հայաստանի մէջ ճնշումի քաղաքականութիւն կը վարեն մեր ընկերներուն դէմ՝ խուզարկութիւններով, ձերբակալութիւններով եւ բանտարկութեամբ», ըսաւ ան:

Ապա Փափագեան իր խօսքը աւարտեց ըսելով. «Սիրելի՛ բարեկամներ, սիրելի՛ ընկերներ, Դաշնակցութիւնը իրաւունք չունի հրաժարելու պայքարէն, Դաշնակցական ընկերները իրաւունք չունին հիասթափուելու: Մենք առաքելութիւն ունինք. մենք պէտք է ամէն ինչ ընենք, որպէսզի կազմակերպենք մեր ժողովուրդի վերկանգնումը, եւ մենք պիտի յաջողինք: Ամբողջ աշխարհով մէկ, մէկ բուռնցք դարձած, մենք պէտք է շարունակենք պայքարը Հայաստանի ժողովուրդին, Արցախի ժողովուրդին, Հայաստանի եւ Արցախի համար»:

Փունջ մը յեղափոխական երգերով հանդէս եկաւ յեղափոխական երգերու մեկնաբան Գօգօ Թիւթիւնճեան, որմէ ետք Գերշ. Տէր Բաբգէն Արք. Չարեան փոխանցեց իր սրտի խօսքը ըսելով. «Մենք իրաւունք չունինք յուսահատուելու եւ թոյլ պէտք է տանք մենք մեզի տկարանալու. մենք ինչպէս անցեալին, ինչպէս վարդանանց պատերազմին, ինչպէս Սարգսարապատի եւ Արցախի Ազատամարտին անվարան պայքարեցանք, այսօր եւս պիտի շարունակենք մեր պայքարը բոլոր մակարդակներուն վրայ, իրաւունք չունինք անտարբեր մնալու: Այս պէտք է ըլլայ մեր ուղին եւ այս պէտք է ըլլայ մեր ճանապարհը»:

«Արիւնոտ դրօշ»-ի եւ «Մշակ Բանուոր»-ի երգեցողութեամբ վերջ գտաւ օրուան հանդիսութիւնը:

## Սոնա Թիթիզեան Կէտիկեան



# ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ձ. ՏԱՐԻ, Թիւ 3, Փետրուար 2023



## ՀԱՒԱՏԱՂ ԹԷ ԸՆԿՂՄԻԼ...

«Ինչո՞ւ վախկոտ էք, տակաւին հաւատք չունիք»:

Քրիստոսի պատասխանն էր աշակերտներուն, որոնք իրենց հաւատքին մէջ պահ մը տկարացան, պահ մը յուսահատեցան: Անոնք երբ իրենց Վարդապետին հետ նաւուն մէջ էին Գալիլիոյ ծովուն վրայ, մէկ ափէն միա ափը անցնելու համար, յանկարծ ծովը կը փոթորկի, վտանգ կը սպառնայ նաւուն ընկղման: Աշակերտները կը վախնան պահ մը, կը յուսահատին եւ կու գան իրենց Վարդապետին մօտ, որ քիչ մը անդին նաւուն մէջ կը հանգստանար: Կ'արթնցնեն զինք ըսելու համար, որ հոգո՞չ որ ընկղմելու վտանգին մէջ ենք:

Քրիստոս ոտքի կը կանգնի, նախ ծովը կը հանդարտեցնէ եւ կը դառնայ աշակերտներուն եւ կ'ըսէ. «Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք, տակաւին հաւատք չունիք»: Ինչո՞ւ այդպիսի հարցումով կը պատասխանէ աշակերտներուն, այն աշակերտներուն, որոնք ամէնօրեայ կերպով իր կողքին էին, ականջալուր էին իր պատգամներուն, ականատես էին իր կատարած հրաշքներուն, բժշկութիւններուն, ինչպէս նաեւ լաւ ձկնորսներ էին, վարժ էին ծովուն, փոթորիկներուն, դժուարութիւններուն, բայց պահ մը տկարացան, յուսահատութեան մատնուեցան եւ սկսան մեղադրել Տիրոջ ըսելով, որ հոգո՞չ, կորսուելու, ընկղմելու վտանգին առջեւ ենք կանգնած:

Այստեղ Քրիստոս յատուկ պատասխան մը կու տայ, ըսելով, որ դուք ձեր հաւատքին մէջ ինչո՞ւ կը տկարանաք, ինչո՞ւ թերահաւատ էք, մանաւանդ դժուար, որ վաղը իմ պատգամները, իմ ճշմարիտ խօսքերը պիտի տարածէք ժողովուրդին կեանքին մէջ եւ բնական է, որ դժուարութիւններու պիտի հանդիպիք, փոթորիկներու պիտի հանդիպիք, տագնապներ պիտի ունենաք: Երբեմն ինծի համար ատենաի առջեւ պիտի կանգնիք եւ այդ բոլորին դիմաց պէտք չէ տկարանաք. ընդհակառակն ձեր հաւատքին մէջ ամուր պիտի մնաք:

Հաւատքը ուրիշ բան չէ, եթէ ոչ վստահութիւն: Եթէ ես քեզի կը վստահիմ, ամբողջապէս քեզի կը նուիրուիմ: Եթէ ես Տիրոջ կը վստահիմ, իր ներկայութիւնը կը զգամ, բնականօրէն կը զգամ, որ. առանձին չեմ, Տէրը ինծի հետ է: Աստուած իմ կողքին է եւ հետեւաբար չեմ վախնար ու չեմ տկարանար:

Այո, մենք բոլորս ալ տկար արարածներ ենք: Ենթակայ ենք մեղանչումի, երբեմն տկարանալու մարդկայնօրէն փոթորիկներու եւ ալեկոծումներու դիմաց: Սակայն, մեր Տէրը կու գայ ըսելու վախկոտ մի՛ ըլլաք, մի՛ վախնաք, հաւատքով ամրապնդուեցէ՛ք եւ վստահեցէ՛ք, որ Աստուած ձեզի հետ է:

Այսօրուան աշխարհին մէջ, ինչպէս երէկ, ինչպէս այսօր եւ վաղը ունինք եւ պիտի ունենանք նման փոթորկայից, նման ալեկոծ պահեր, դժուարութիւններ անհատապէս, հաւաքաբար, թէ՛ ազգովին:

Այո, մարդուն ծնունդէն սկսած մինչեւ գերեզման նեղութիւններն ու դժուարութիւնները անպակաս են: Երբեք չմտածենք, որ զերծ պիտի ըլլանք այդ բոլորէն:

Այսօր եթէ ես ծովափ երթամ, ծովը մաքուր է, խաղաղ է ու հանդարտ: Իսկ ուրիշ օր մը կ'երթամ նոյն ծովը այս անգամ ալեկոծ է եւ փոթորկոտ ու կեղտոտ է: Մեր կեանքն ալ այսպիսին է, յաճախ մեր կեանքին մէջ փոթորկայից պահեր կան եւ դժուարութիւններ:

Ամուր պէտք է մնանք մեր հաւատքին մէջ, մանաւանդ այսօրուան մեր կեանքի փոթորիկներուն դիմաց, իրարմով պէտք է զօրանանք, իրարու վստահինք եւ իրարմով զօրացած ուժ դառնանք դժուարութիւնները յաղթահարելու ու տագնապները հեռացնելու, բայց մանաւանդ մեր հայեացքը Տիրոջ դարձնելու եւ զինք լսելու կորստեան չմատնուելու համար:

Այսօր, Եկեղեցին Քրիստոսի մարմինն է այս աշխարհի վրայ, պահենք մեր կապուածութիւնը մեր եկեղեցոյ հետ, մեր ներկայութեամբ, մասնակցութեամբ եւ զօրակցութեամբ, քաջ գիտնալով, որ եկեղեցին ԽԱՂԱՂ ՆԱԻՆ է մեզ ՆԱԻՎՀԱՆԳԻՍՏ ԱՌԱՋՆՈՐԴՈՐԸ:

ԶՎԱԽՆԱՆՔ ԵՐԲԵՔ Այլ միշտ ՀԱՒԱՏԱՆՔ եւ չէնք կորսուիր:

**Բարգէն Արքեպիսկոպոս**

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տարին արդէն իսկ իր հունին մէջ մտած է եւ կեանքը մեր դիմաց կը դնէ զանազան մարտահրաւերներ, որոնք մարդու կեանքը անլի արդիւնաւետ կը դարձնեն: Եկեղեցին իր կարգին, մարդու հոգեւոր կեանքին մէջ, մարտահրաւեր կը դնէ առաւել եւս աճելու ու զարգանալու Տիրոջ անդաստանին մէջ: Եկեղեցոյ տուած մարտահրաւերներէն մէկն է պահեցողութիւնը, պահեցողութեան շրջանները:

Շուտով կը թեւակոխենք տարուան ամէնէն կարեւոր շրջաններէն մին, որ ծանօթ է քառասնօրեայ պահեցողութիւն եւ կամ մեծ պահք յորջորջումով, որուն կը յաջորդէ Սուրբ Յարութեան տաղաւարին շաբաթապահքը:

Պահեցողութիւնը կենդանական կերակուրներէ հրաժարելէն անդին կրօնական, բարոյական ու հոգեւոր հասկացողութիւն է, որ մարդ արարածին կը հրաւիրէ ինքնաքննութեան:

Կրօնական ճշգրիտ եւ խորունկ իմաստով, պահքը այնպիսի արարք մըն է, որ մարդ արարածը կ'առաջնորդէ ինքզինք կամաւորապէս զրկելու որոշ զգայարանական, նիւթական հաճոյքներէ եւ ճոխութիւններէ: Առիթ կու տայ անոր մտածելու իր հոգեկան, բարոյական կեանքի մշակման մասին:

Պահքի միջոցաւ, մարդ ինքզինք կը զրկէ սովորական այն հաճոյքներէն, որոնք առօրեայ կեանքին մէջ կը լեցնեն իր ժամանակը եւ կը գրաւեն իր կեանքի առանցքը: Համադամ կերակուրներէ հրաժարելու երեւոյթը խորհրդանշական եւ թելադրական արժէք ունի: Այլ խօսքով, միսն ու կաթը կամ հալկիթը չէ որ բուն հարցը կը կազմեն: Այլ անոնցմէ հրաժարիլը՝ միջոց, մթնոլորտ կը ստեղծէ մարդուն համար, մտածելու եւ ջանք թափելու իր հոգեկան ապրումներու ազնուացման համար: Կամաւոր ինքնազրկումը առիթ կը ստեղծէ իրեն իր մտածումներն ու արարքները ուղղելու դէպի իր անձը, դէպի իր ներաշխարհը, իր հոգեւոր, բարոյական ապրումներու զարգացման կենսական պարտաւորութեան հրամայականին տակ:

Հաւատալով Աստուծոյ կեանքէն հեռու կը մնան վախն ու սարսափը, որոնք կը դանդաղեցնեն մեր հոգեւոր աճումի ընթացքը: Մեծ Պահից շրջանի օղակները զարդարենք Աստուծմէ եկած շնորհքներով, բարիք գործելով, հաշտուելով նախ մեր անձին եւ ապա մեր նմաններուն հետ: Ապաշխարութեամբ մաքրենք մեր սիրտն ու հոգին ամէն տեսակի պիղծ խորհուրդներէ, որոնք մեր անձերը դէպի կորուստ կ'առաջնորդեն:

Հետեւաբար Մեծ Պահքի շրջանը ինքնաբժշկութեան գեղեցիկ եւ օգտաւետ առիթ մըն է: Ու անոր բարեբար արժէքը չենք կրնար տեսնել մինչեւ չփորձենք եւ չճաշակենք անոր քաղցրութիւնը: Մարդ արարածը պէտք է իմաստութիւնն ու քաջութիւնը ունենայ ինքզինքին նեղութիւն, զրկանք, չարչարանք պատճառելու, դրական ու առողջարար նպատակի համար, որպէսզի իրական նեղութիւն եւ զրկանք պատճառելու, վիշտն ու չարիքը, նուազ կշռեն կեանքի իր նժարին մէջ: Կամաւորապէս կրուած զրկանքը նեղութիւն չէ, այլ դուռն է երջանկութեան:

Բարի Պահեցողութիւն:

**Հայր Յակոբ**

## ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

«Զօրացի՛ր ու քաջասիրտ եղի՛ր, մի՛ վախնար ու մի՛ զարհուրիր. Քանզի քու Տէր Աստուածդ քեզի հետ պիտի ըլլայ, ուր որ երթաս»:

Յեսուայ 1:9

“Be strong and courageous. Do not be afraid; do not be discouraged, for the Lord your God will be with you wherever you go.”

Joshua 1:9





## ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ՝ ԲԱՆԱԼԻՆ ՊԱՇՏՈՂՈՒԹԵԱՆ

«Գնա՛ նախ հաշտու՛՛ք եղբորդ հետ եւ անպա եկուր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ՛ք» (Մատթէոս 5.24):

Երբայեցի ժողովուրդը իր նախնիներէն հասած իրաքանչիւր պատուիրան ծայրայեղորէն կը պահէր, յաճախ առանց անոնց կեդրոնական իմաստները հասկնալու: Անոր համար Քրիստոս ըսաւ. «Մի՛ կարծէք, թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու» (Մտ 5.17):

Ան երբ կը խօսէր օրէնքներուն մասին, շեշտը դրաւ սպաննութեան մեղքին վրայ, ըսելով, որ միայն սպաննութեան արարքը մարդ արարածը դատաստանի պիտի չառաջնորդէ, այլեւ բոլոր անոնք որոնք, իրենց հարազատներուն եւ եղբայրներուն դէմ զուր տեղ կը բարկանան, ենթակայ պիտի ըլլան դատաստանի: Բոլոր անոնք որոնք յիմար կը կոչեն զիրար, կ'ամբաստանեն, կը բամբասեն, կը զրպարտեն, կը նախատեն, անոնք դատաստանի պիտի կոչուին: Նաեւ իր խօսքին շարունակութեամբ կը պատուիրէ ըսելով, «Եթէ՛ զոհարանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես, որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ զոհարանին առջեւ, գնա՛ նախ հաշտու՛՛ք եղբորդ հետ եւ անպա եկուր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ՛ք» (Մտ 5.23-24):

Ահաւասիկ կը թեւակոխենք մեծ պահոց շրջանը եւ Քրիստոս կու գայ նոյն մարտահրաւերը տալու մեզի.

«Գնա՛ նախ հաշտու՛՛ք եղբորդ հետ», այս պէտք է ըլլայ իրաքանչիւր Քրիստոնէայ մարդու կեանքի սկզբունքը: Ո՛չ ուտելիքէ՛ զրկուիլով, ո՛չ պահեցող ըլլալով, ո՛չ ալ աղօթող ըլլալով կրնան մեզ օգտակար դառնալ, եթէ՛ մենք մեր մէջ ունեցած քէնը, ատելութիւնն ու ոխակալութիւնը մաքրած չըլլանք հաշտութեամբ: Հաշտուի՛լ եւ անպա պահեցող ըլլալ:

Բոլորս Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած ենք: Արարածներ ենք Արարիչին, ընտրեալներ ենք Միաձինին, գաւակներ ենք Ամենաբարձեալ Հօր, որ կը գթայ մեր վրայ, այնքան ողորմած է, որ մարդկային տրամաբանութիւնը պահ մը անբացատրելիօրէն համր կը դառնայ Աստուծոյ սիրոյն դիմաց:

Հետեւաբար, մեր եկեղեցի գալով կ'ուզենք աղօթել եւ Աստուծոյ հետ սերտ յարաբերութեան մէջ մտնել, բայց միեւնոյն ժամանակ մեր հարգատիւն եւ կամ եղբոր դէմ պիտի մեղանշած մնանք, այն ատեն մեր ընծաները անընդունելի, իսկ մեր աղօթքները անխմաստ կը դառնան, որովհետեւ երբ սիրտն ու հոգին մաքուր չեն, արդարեւ աղօթքն ալ բիւրեղ չ'ըլլար, այլ կեղծ ու մեքենական:

Վերջապէս, հաշտութիւնը պսակն ու թագն է մեր մատուցած ընծաներուն, այն ընծաներուն, որոնք միշտ կը մատուցանենք Աստուծոյ սեղանին առջեւ:

Եսայի Սարկաւազ



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՆՈՒԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Բարեշնորհ Եսայի Սրկ. Մանուկեանի

Զեռամբ՝

Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին



ԿՈՉՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 18 Փետրուար 2023 Երեկոյեան ժամը 7:00  
Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցի

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՆՈՒԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Կիրակի, 19 Փետրուար 2023 առաւօտեան ժամը 10:30  
Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցի

ԴԻՒԱՆ  
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՈՐԴԱՐԱՆԻ

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՄԻՆ

### ԽՐԱՏՆԵՐ ՄԵՂԱԻՈՐՆԵՐՈՒՆ

Օրինեալ է մարդասէր Աստուածը, որ իր աստուածային ողորմութեամբ եւ շնորհներով կը ջնջէ մեր մեղքի նշանները, երբ ջերմ արցունքով ապաշխարենք իրեն: Իսկ Սատանան, այդ անհիծեալ կատաղած շունը եւ մահաբեր օձը, կը սիրէ բոլոր մեղքերը եւ չար գործերը: Անոնք են իր ցնծութիւնը, կերակուրն ու խմելիքը եւ հանգիստը: Մեղքով անյագ է, ինչպէս արիւն ծծող տգորուկը, եւ բնաւ չի գոհանար: Իսկ անդարձ մեղաւորին վրայ անելի եւս ուրախութեամբ կը ցնծայ, քան այն բոլոր մեղքերուն վրայ, որոնք կը գործուին ամբողջ աշխարհին մէջ: Իրեն հետ առնելով շնակերպ դեւերը եւ մեղսասէր ու ախտակեր իշխանները, կու գան անդարձ մեղաւորին քով եւ կ'ըսեն անոր. «Դուն մեր հոգին ու սիրտն ես, մեր անդրանիկ որդին, եւ ինչ լաւ, երանի քեզի, որ կը սիրես մեզ, եւ չես դիմեր քու Քրիստոսիդ»: Հոն կը հանգչին ցնծալով, անդարձ մեղաւորին հոգիին մէջ, կը կերակրուին անոր սրտէն ու կ'ըմպեն անոր չար ախտերը, եւ գովելով կը գգուեն զայն, ըսելով՝ «Դուն մերն ես, մեզմէ անբաժան, եւ մեզի հետ կը վայելես անշէջ կրակը. մեր զիրկին ու մեր սիրտին մէջ կը պահենք քեզ, եւ քեզ պատուելու համար՝ դժոխքին մէջ Նեոը կը բերենք քու աջ կողմդ կը կանգնեցնենք, իսկ Յուդան՝ ձախ կողմդ, նաեւ Փարաւոնը՝ քու եղբայրդ, Յուլիանոսը եւ Մաքսիմիանոսը, եւ անոնց նմանները»: Եւ այսպիսի անտիսնեղով կը փառաւորեն իրենց սիրելիին եւ պաշտօնեան:

Ահաւասիկ, որդեակներս, լսեցէք եւ մտաբերեցէք, որ այդ է սատանային տուած պատիւն ու մեծարանքը, որով պատրաստուած է անդարձ մեղաւորներուն համար: Իսկ մահուապի մեղքը, որուն մասին կը խօսի Քրիստոսի առաքեալը, այն է՝ որ մեծ մեղքեր կը գործէ, բայց բնաւ չուզեր եւ չի խորհիր Աստուծոյ դառնալ, չի լսեր Սուրբ Գիրքերուն եւ քահանաներուն, չի հաւատար, թէ յարութիւն եւ հատուցում կայ, այլ չարին մէջ կը մեռնի. ուստի անմահ մահը զայն կը տանի, այսինքն՝ ազատում չունեցող տանջանքն ու վիշտերը:

Աստուծոյ երկիւղով ծնած որդեակներս, հոգ մի՛ ընէք ու մի՛ ցաւիք վերջին օրուան համար, որովհետեւ անօգուտ է այդպիսի քննութիւնը. որով Տէրը արգիլեց Իր աշակերտներուն, ըսելով. «Ձեզի տրուած չէ գիտնալ ժամերն ու ժամանակները, որ Հայրը դրաւ Իր իշխանութեամբ» (Գրծ 1.7), կամ ուրիշ տեղ մը, թէ՛ «Ոչ ոք գիտէ, բացի Հօրմէն» (Մտ 24.36): Որովհետեւ ան որ մեռա՛ւ անոր համար վերջին օրը եղաւ, եւ այլեւս չի կրնար իր մեղքերը ապաշխարել եւ կամ բարիք գործել:

Որդեակներս, ձեր սրտերուն մէջ մի՛ ըսէք, թէ՛ «Նախ կը մեղանշենք, ընելիքնիս» կ'ընենք, մեղքերու հեշտութիւնը կը ճաշակենք, ապա դարձեալ կ'ապաշխարենք եւ Աստուծոյ կ'ըլլանք», ինչպէս որ շատեր ըրին: Գիտցէք, որ ատիկա դեւերու խորհուրդ է սերմ է: Դուք մտիկ մի՛ ընէք անոնց, որովհետեւ մահը գող է. մենք տեսանք ու լսեցինք, որ շատեր չար գործերու մէջ մեռան ու չկրցան խոստովանիլ եւ մեղայ ըսել, եւ այդպիսով ողորմելի դարձան:

Ո՛վ որդեակներս, ձեր հոգիները սուրբ ասագանին միջոցով Քրիստոսի հարսերն են: Հետեւաբար զգուշացէք, որովհետեւ եթէ հարսը շնութեամբ պղծէ փեսային անկողինը, փեսան կը պատժէ զայն եւ իր արքայութենէն դուրս կը վտարէ, եթէ մեղքերով թունաւորէք ձեր հոգիները, որ Քրիստոսի հարսն է, եւ եթէ չլուաք ու չսրբէք զայն ապաշխարութեամբ:

Որդեակներ, Քրիստոս ձեզմէ կ'իմանայ եւ ձեր գործերուն համաձայն կը հատուցանէ ձեզի, կարծես կ'ըսէ՛ «Ինչ որ դուք իրարու ընէք՝ ես այդ չափով պիտի չափեմ ձեզ»: Ինչպէս որ գեղեցիկ կոյսի մը կամ մեծահարուստի մը աղջկան պարագային, եթէ տեսնէք որ անոր անդամներէն մէկը ծուռ կամ պակասատր կամ խել է, բնաւ չէք մտածեր կամ չէք խորհիր զայն ձեր տունը առնել, կամ ձեր որդիներուն կամ եղբայրներուն համար, նոյնպէս կ'ընէ՛ նաեւ ձեր հոգիներու փեսան՝ Քրիստոսը: Եթէ այն մեծ օրը ձեր հոգիներուն մէջ որեւէ մեղքի խեղդութիւն կամ ծուռութիւն գտնէ, որմէ ապաշխարութեամբ մաքրած եւ [հոգին] առողջացուցած չըլլաք, Քրիստոս պիտի չհամբուրէ ձեր հոգիները, որովհետեւ խել կ'ըլլաք եւ մեղքերով բորոս, եւ ուստի ձեզ չի մտցնէր հարսանեկան առագաստը, անուշահոտ եւ լուսաւոր հարսանիքը:

Որդեակներս, աղիքներս կը գալարուին ու կ'եփին ձեր վրայ, ինչպէս կ'ըլլայ որդեսէր մօր մը: Անոր համար ձեր բարի եւ չար գործերը մանրամասնօրէն կը քննեն եւ օրինակներով ձեզի կը յայտնեն Աստուծոյ կամքը: Իսկ դուք՝ ուստրերս եւ դուստրերս, ամբողջ սրտով Աստուծմէ խնդրեցէք ինծի համար, որովհետեւ մեծ մեղքերու տէր մարդ մըն եմ եւս, չարասէր, անառակ, եւ կամաւորաբար ու գիտակցաբար Աստուծոյ օրէնքներէն շեղած: Ահա կը խոստովանիմ ձեզի: Ահաւասիկ, հոգեւոր որդեակներս, այս ալ գիտցէք եւ մտաբերեցէք, ինչպէս որ աստուածեղէն Գիրքը կ'ըսէ, թէ՛ Աստուած չհաճեցաւ ու չհոտուրտաց Մովսէսի խունկը եւ ոչ ալ ընդունեց Աբրահամի, Իսահակի, Յակոբի, Յոնի եւ Աբելի զոհերն ու ընծաները, որովհետեւ Աստուած անկարօտ է այսպիսի բաներու. այլ հաճեցաւ եւ հոտուրտեց անոնց հոգիի եւ սրտի սուրբ, աննենգ եւ մաքուր խորհուրդները, եւ անով ընկալեց եւ ընդունեց անոնց նուիրները, ընծաները, զոհերն ու պատասագները: Նմանապէս դուք ալ մաքրեցէք ձեր սրտերն ու հոգիները մախանքէն, չար ու գէշ ցանկութիւններէ, եւ զանազան արատներէ եւ բիծերէ, եւ այնուհետեւ Աստուած կ'ընդունի ձեր հաւատքը եւ այն բարի գործերը՝ որոնք Իր անունով կը գործէք: Նոյն այս խորհուրդներուն կապակցութեամբ լսեցէք, որդեակներ, եւ հասկցէք հետեւեալ առակին իմաստը: Ժամանակին գեղեցիկ ու ցանկալի թագուի մը կար. հարիւր մեծամեծ իշխաններ չկրցան զայն խաբել շնութեամբ, ոսկիով, մարգրիտով եւ թանկագին քարերով. բայց յետոյ սեւապատկեր եւ գարշելի թզուկ մարդ մը խաբեց զայն եւ շնութեամբ պղծեց: Երբ թագաւորը իմացաւ՝ չողորմեցաւ անոր այդ մէկ անգամ խաբուելուն համար. պատժեց թագուիին եւ վտարեց:


ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅԳԵԿՅԻ

### ՊԱՆՈՒՍԾ ԲԱՌ

❖ Ամբողջացուցէ՛ք Աստուածաշնչային բառերով պատրաստուած հանելուկը եւ գտէ՛ք պահուած բառը:

Բ	Ա	Բ	Դ	Ա	Հ	Ա	Մ	Ա	Ս
Ա	Ի	Յ	Ի	Ա	Ն	Ս	Ղ	Ն	Ե
Բ	Ս	Ո	Մ	Պ	Ա	Տ	Ե	Դ	Մ
Ե	Ա	Վ	Ի	Ո	Խ	Ե	Ղ	Դ	Ս
Լ	Հ	Ս	Ա	Ի	Ա	Պ	Ե	Ա	Ա
Ո	Ա	Է	Ս	Դ	Հ	Ա	Հ	Ն	Ռ
Ն	Վ	Փ	Ե	Ա	Ա	Հ	Դ	Ի	Ա
Յ	Ա	Վ	Ո	Բ	Յ	Ա	Ջ	Վ	Մ
Ո	Ա	Շ	Տ	Ա	Դ	Ա	Վ	Յ	Ա
Ն	Յ	Ա	Բ	Է	Թ	Ն	Լ	Է	Ք

- Եսաւ
- Սեմ
- Քամ
- Յաբէթ
- Ապուր
- Ջրհեղեղ
- Աբրահամ
- Իսահակ
- Բաբելոն
- Յովսէփ
- Սառա
- Յակոբ
- Նահապետ
- Անդրանիկ
- Բաահակ
- Նոյ
- Աշտարակ
- Նախահայր



❖ Պահուած բառ.-  
Ի՛նչ կը կոչուէր Աբրահամի երկրորդ գաւակը:







## Ջարագովական 2

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԻՆՉՈ՞Վ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ Ե ԵՒ ՈՐՔԱՆՈ՞Վ ՎՍՏԱՀԵԼԻ

#### Աստուածաշունչին իրայատկությունը

Ամենապաշտելի եւ ամենաատելի, ամենահալածուած եւ ամենատարածուած, ամենաշատ բացատրուած եւ մեկնաբանուած, բայց ամենասխալ հասկացուած, ամենատառաջին եւ ամենաշատ թարգմանուած ու տակաւին թարգմանուող գիրքն է Աստուածաշունչը: Այս բոլորով հանդերձ, մէկ բան յստակ է եւ անտարկելի, թէ՛ անիկա իրայատուկ գիրք մըն է, տարբեր՝ կրօնական թէ այլ բնոյթի ուրիշ որեւէ գիրքէ: Եւ ի՞նչ բանի մէջ կը կայանայ անոր իրայատկութիւնը:

Աստուածաշունչ Սուրբ Գիրքը գրուած է մօտաւորապէս 1500 տարիներու ընթացքին, շուրջ 40 տարբեր հեղինակներու կողմէ, որոնք կու գան կեանքի տարբեր ասպարէզներէ, գրուած է հիմնականօրէն երկու լեզուներով (Եբրայերէն՝ Հին Կտակարանը, Յունարէն՝ Նոր Կտակարանը), այս բոլորով հանդերձ՝ անիկա իրայատուկ է՝

- Պատմութեան շարունակականութեամբ.- Կը սկսի երկինքի եւ երկրի ստեղծագործութեամբ (Ծնն 1) եւ կ'աւարտի նոր երկինքի եւ նոր երկրի ստեղծագործութեամբ (Յլոս 19):

- Փրկագործութեան միեւնոյն ծրագրով.- կը սկսի մարդուն անկումով՝ մեղանշումով եւ կը հասնի մինչեւ Քրիստոսի ծնունդ, խաչելութիւն, յարութիւն եւ՝ երկրորդ գալուստ:

- Վարդապետական ուսուցումներու անշեղ միահիւստեամբ:

- Քրիստոսակեդրոնութեամբ (Յի 5.39).- Քրիստոս ըլլալով

Մովսիսական Օրէնքին եւ Մարգարէական խոստումներուն լրումն ու կատարումը, ինչպէս որ պատարագիչ քահանան կ'ըսէ, իրաքանչիւր պատարագի աւարտին՝ «Կատարումն օրինաց եւ մարգարէից դու ես՝ Քրիստոս Աստուած փրկիչ մեր»:

- Համամարդկային մշակոյթներուն վրայ ձգած դրոշմով եւ ազդեցութեամբ: Լսենք Արշակ Չոպանեանի խօսքը այս մասին.- «Մեր հին ազգային գրականութիւնը իր ծաղկման եւ զարգացման մէջ շատ բան կը պարտի եբրայեցի քերթողներուն ու մտածողներուն, ինչպէս որ անոնց շատ բան կը պարտին Տանթէներն ու Միլթոններն ու Հուկսոները:» Նոյնը կարելի է ըսել Միքէլ Անճելօներուն, Ռամպանթներուն, Պախերուն եւ Պեթովեններուն մասին:

#### Որքանով վաւերական եւ վստահելի գիրք է Աստուածաշունչը

Այլ խօսքով, Աստուածաշունչին մէջ նշուած պատմական դէպքերն ու դէմքերը որքանով իրական են եւ ոչ առասպելաբանութիւններ:

17-18րդ դարերուն, յատուկ ջանք կը թափուէր Աստուածաշունչին պատմականութիւնը կասկածի տակ առնելու եւ անիկա հէքիաթային եւ առասպելական համարելու: Սակայն, 1840-ականներուն հնախուզական եւ հնագիտական ահագին տուեալներ յայտնաբերուեցան, որոնք եկան ապացուցելու Աստուածաշունչին պատմական վաւերականութիւնը: Այսօր, արդէն, Աստուածաշունչը կ'օգտագործուի որպէս պատմական եւ պատմագիտական ուսումնասիրութիւններու վստահելի աղբիւր: Լսենք Պարոյր Սեւակի հաստատումը այս մասին.- «Հիմա արդէն գիտութիւնը սկսել է լրջօրէն զբաղուել Աստուածաշունչի պատմական ու առասպելական հիմերի բացատրութեամբ: Բանից պարզուում է, որ մտացածին համարուած հրաշապատումները բնաւ էլ ցնդաբանութիւններ չեն եւ անցած քաղաքակրթութեան ուսումնասիրութիւնը դեռ շատ առեղծուածներ կը բացի:»

Այս բոլորէն ետք, ինչ գիրք է Աստուածաշունչ մատենը:  
Միով բանիւ եւ ամէն բանէ առաջ՝ անիկա հաւատքի գիրք է:  
Աստուածաշունչը Աստուծոյ յայտնութիւնն է մարդուն. Աստուած-մարդ յարաբերութեան պատմութիւնն է. մարդուն ուղղուած դարձի ու վերադարձի հրաւերն է,՝ ամփոփուած «Անառակ Որդի»ի դրուագով: Եւ, ի վերջոյ, անիկա Աստուծոյ Թագաւորութեան խոստումն ու տեսիլքն է, լրումը մարդուն տրուած փրկութեան յոյսին, որուն կարելի է վստահիլ առաւել քան անցեալէն եկող որեւէ այլ պատմական գիրքի:

**Հայր Գեղարդ**

Յ.Գ. մեզի ուղարկեցէք Աստուծոյ եւ ձեր հաւատքի ճանապարհորդութեան մասին ձեր ունեցած հարցումները:

## Apologetics 2

### THE HOLY BIBLE ITS UNIQUENESS AND RELIABILITY

#### The uniqueness of the Bible

The Holy Bible is the most revered and most despised, most persecuted and most distributed, most interpreted and most studied and yet most misunderstood, the first and the most translated and still being translated book in history. One thing is indisputably clear about the Bible, it is a very unique book, different from any other religious or secular book. Hence, what constitutes its uniqueness?

The Bible is written for approximately 1500 years, by almost 40 authors, who come from a wide range of social statuses and occupations, and it's written mainly in two languages; Old Testament in Hebrew and New Testament in Greek. Its uniqueness lies in the following facts:

- We find the same storyline throughout the Bible; it starts with the creation of the heaven and the earth (Gen 1) and concludes with the creation of "the new heaven and the new earth" (Rev 19).

- The Bible talks about the one and the same salvific plan of God, which starts with the fall of man and reaches out to the crucifixion and the resurrection and culminates in the second coming of Christ.

- It teaches the same unequivocal doctrine.

- It is Christocentric (John 5:39); Christ being the fulfillment of the Law and the Prophets, as the words of the concluding prayer of the Armenian Holy Liturgy reads: "O Christ our Lord, you are the fulfillment of the Law and the Prophets."

- Its impact and contribution to the development of universal art and culture. The prominent Armenian writer, critic and journalist Arshag Tchobanian states that "the Hebrew writers and thinkers have had a major influence on the development of the Armenian literature, as they have inspired Dante and Milton and Hugo." The same could be said about Michael Angelo, Rembrandt, Bach and Beethoven.

#### How reliable and trustworthy is the Bible

In other words, are the places and the people mentioned in the Bible historically relevant or just legends?

In the 17th and 18th centuries, there was a deliberate attempt to discredit the historicity of the Bible, and consider it to be a mere fairy tale or a legend. Then, starting in the 1840s, archeological and paleological discoveries came to support the reliability of Biblical narratives. Today, the Bible is considered to be a reliable source for the study of history and historiography. The prominent Armenian poet Barouyr Sevag writes: "Nowadays, science is seriously reconsidering the biblical narratives, and has arrived to the conclusion that those miraculous stories are never man-made imaginative riddles, and the study of civilization has yet to uncover many riddles."

After all, what is the essence of the Bible?

In a word and above all it is a book of faith.

It is the revelation of God to men. It is the story of the relationship between God and man. It is the invitation letter to men to repent and turn to God, which is presented in a nutshell in the parable of the prodigal son. And lastly, it is the promise of the Kingdom of God, the completion of the hope of salvation, which is more reliable than any other history book.

**Fr. Keghart**

P.S. send us your questions concerning God and your journey of faith.

## ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԳԻՐԳՈՐ ՆԱՐԵԿՑԻԷՆ

Կենդանի Աստուծոյ ամէնօրինեալ Որդի, քեզի համար չկայ բնաւ անկարելի բան. Քու ողորմութեանդ փառքին անստուեր նշոյլները երբ կը ծագին. Մեղքերը կը հալին, դէտերը կը հալածուին, յանցանքները կը ջնջուին, կապանքները կը խզուին, հարուածները կը բժշկուին, վէրքերը կ'առողջանան. ապականութիւնները կը վերցուին, տխրութիւնները տեղի կու տան, խաւարը կը փախչի, տագնապը կը տարագրուի, չարիքները կը չքանան, յուսահատութիւնները կը հալածուին, ու Քու ամենակարող ձեռքդ կը թագաւորէ, ո՛վ քաւիչդ ամենայնի:

**Բան ԽԱ.**

### ԳԻՏԷՐԻ ԹԷ...

Առաջաւորաց պահքը Հայ Առաքելական Եկեղեցոյ առաջին պահքն է, որ հաստատուած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին կողմէ: Յատուկ է միմիայն Հայ Ժողովուրդին:





## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԳԻՐՔԻ ԱՇԽԱՐՀԵՆ

### ՄԱՐԴԸ ՆՈՐԷՆ ՉԱՐԱՑԱԻ

Ջրհեղեղին ետք Նոյի երեք որդիներու՝ Սեմի, Քամի եւ Յաբելի զաւակներն ու թոռները բազմացան եւ երկիրը դարձեալ լեցուեցաւ մարդոցմով: Անոնք կը յիշէին ջրհեղեղի պատմութիւնը, բայց նորէն գոռոզագացան եւ որոշեցին:

- Եկէ՛ք, աշտարակ մը կառուցենք, որուն գագաթը երկինք՝ Աստուծոյ հասնի, եւ եթէ նորէն ջրհեղեղ ըլլայ՝ փրկուինք:

Մարդիկ սկսան հպարտանալ իրենց կատարած գործերով. ասիկա Աստուծոյ հաճելի չեղաւ. բարկացաւ եւ այնպէս եղաւ, որ մարդիկ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, եւ չհասկնալ իրար: Աշտարակի շինարարութիւնը կիսատ մնաց եւ մարդիկ տարածուեցան աշխարհի վրայ՝ տարբեր վայրեր: Այդ օրէն սկսեալ Աշտարակի անունը կոչուեցաւ Բաբելոն՝ խառնաշփոթութեան վայր:

### ՆԱՀԱՊԵՏՆԵՐԸ՝ ԱՐԱՀԱՄ, ԻՍԱՀԱԿ, ՅԱԿՈՒԲ, ՅՈՎՍԷՓ

Աստուած ուզեց պատրաստել ժողովուրդ մը, որ միշտ հնազանդ ըլլար իրեն, եւ առաջնորդուի Աստուծոյ օրէնքներով: Ինչպէս ամէն ժողովուրդ ունի իրեն արժանի նահապետ մը, այդպէս ալ Ան ընտրեց արդար մարդ մը՝ Աբրահամ անունով, որ ոչ թէ միայն մէկ ժողովուրդի, այլ շատ ժողովուրդներու նախահայր պիտի ըլլար: Աստուած իրենց խոստացաւ նաեւ երկիր մը, ուր պիտի բազմանար անոր ժողովուրդը: Այդ ժողովուրդը պէտք է միշտ պատմէր Աստուծոյ գործերուն մասին եւ պիտի հետեւէր անոր օրէնքներուն:

Աստուած բոլոր ժողովուրդներուն ալ տուած է երկիր մը, զոր ազգեր հայրենիք կը կոչեն. Երկիր մը որ այդտեղ ապրող ժողովուրդը պարտաւոր է զայն պաշտպանել, մաքրու, անարատ պահել:

Աբրահամ եւ իր կինը՝ Սառան, իրենց ծերացած տարիքին զաւակ մը ունեցան, զոր Իսահակ կոչեցին:

Իսահակ ամուսնացաւ Ռեբեկայի հետ եւ անոնք երկուորեակ ունեցան, զանոնք Եսաւ եւ Յակոբ կոչեցին: Հին օրերուն անորանիկ զաւակը շատ իրաւունքներ ունէր, եւ օր մը Եսաւ շատ անօթեցած, հրաժարեցաւ իր անորանիկ որդիի իրաւունքներէն եւ տուաւ իր եղբորը՝ Յակոբին:

### ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱԿԵՐՏԻՆ ԳՐՔՈՅԿԸ

### ԱՌԱԿՍ ԶԻՆՉ ՅՈՒՅԱՆԷ...

#### ԳԱՅԼԸ ԵՒ ՀՕՏԸ

Ծերացած գայլը, հօտին կը մօտենայ եւ կ'ըսէ.

- Այժմ ապաշխարանքի մէջ եմ: Ձեզ շատ նեղացուցած եմ, որով կ'ուզեմ գալ եւ ձեր տան աւելանալ ըլլալ, որպէսզի թողութիւն ստանամ: Նմանապէս ձեր ձագերը կը պաշտպանեն ուրիշ գայլերէ:

Ոչխարները ուրախացած, շուներուն կ'ըսեն.

- Այլեւս մեղք մի գործէք ասոր դէմ:

Գայլը կը սպասէ, մինչեւ որ գառնուկները մեծնան: Ապա կը սկսի բզբտել եւ ուտել, մինչեւ որ շատերու կողմէ կը նկատուի եւ կը սպաննուի:

**Այս առակը կը խրատէ, հապճեպ կերպով չհաւարալ չարերու սովորութիւններուն, քանի որ մեղքը անոնց մէջ հիմնադր, բնութիւն կը դառնայ եւ իրեն քաշելով մարդը, զայն մահուան կը դադարապարտէ:**

Մխիթար Գոշ

### ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

#### • Ո՛վ ստեղծեց այս աշխարհը:

Այս աշխարհը ստեղծեց ամենաբարի Աստուած, վեց օրուան մէջ:

#### • Ինչ բան է ստեղծեց:

Աստուած «Եղիցի» (թող ըլլայ) ըսելով՝ ոչինչէն գոյացուց երկինքն ու երկիրը, արեւը, աստղերը, ջուրը, հողը, կրակը, օդը, մետաղները, տունկերը, կենդանիները, եւ ամէն ինչ, որ գոյութիւն ունի աշխարհի վրայ:

#### • Ինչ կը հասկնանք ոչինչէն գոյացնել ըսելով:

Երբ կ'ըսենք ոչինչէն գոյացնել, կը հասկնանք, թէ այս բոլորը սկիզբէն չկային եւ երբ Աստուած ուզեց, զանոնք ստեղծեց:

#### • Ուրեմն ասոնցմէ առաջ ինչ կար:

Առաջ միայն Աստուած կար, այսինքն՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին:

#### • Աստուած ինչ բան է ստեղծեց մարդը:

Աստուած մարդը հողէն ստեղծեց եւ անոր բանականութիւն եւ անմահ հոգի տուաւ:

#### • Մարդը միւս արարածներէն ինչ առաւելութիւն ունի:

Մարդը միւս բոլոր արարածներէն գերազանց է իր անմահ հոգիով, իմացականութեամբ եւ բանականութեամբ:

#### • Աստուած ինչ վիճակի մէջ ստեղծեց մարդը:


Աստուած մարդը արդար, անմեղ եւ անմահ վիճակի մէջ ստեղծեց, որպէսզի իրեշտակներուն նման զԱստուած փառատորէ եւ երջանիկ ըլլայ:

#### • Մարդը մնաց այդ վիճակին մէջ:

Դժբախտաբար մարդը չմնաց այդ վիճակին մէջ, որովհետեւ մեր նախածնողները Աստուծոյ դէմ մեղանշեցին:

### ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«Նոր Կտակարանի Ներածութիւն», հեղինակ՝ Սիփան Քինյ. Գրիգորեան, Էջմիածին, 2021: Հրատարակեալ նուիրատուութեամբ ԱՄՆի Սրբոց Ղեռնդեանց Մայր Տաճարի Բարի Սամարացի խմբակցութեան: Հեղինակը զայն ձօնած է իր հոգեւոյս ընկերոջ՝ Տ. Մաղաքիա Վրդ. Ամիրեանի յիշատակին:



Արժ. Տ. Դավիթ Քինյ. Մարգարեանէ ինծի նուիրուեցաւ այս գիրքը, որուն համար շատ շնորհակալ եմ իրեն: «Նոր Կտակարանի Ներածութիւն»ը կը սկսի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի (ԳՀԾ) դասախօս՝ Մարկոս Քինյ. Մանկասարեանի «Երկու Խօսքով», որ կ'ըսէ. «Գիրքը գրուած է թծախնդրօրէն, սակայն մատչելի լեզուով ու պարզ, անպաճոյճ ոճով, որպէսզի դիտարարու լինի յատկապէս ուսանողութեան ու Նոր Կտակարանի սերտողութեան ճանապարհին՝ առաջին քայլերն անողների համար»:

Կը յաջորդէ ուսումնասիրողին, որ իր կարգին ԳՀԾի դասախօս է, «Նախաբան»ը, որմէ կը տեղեկանանք, թէ գիրքը «արդիւնք է ԳՀԾում աւելի քան մէկ տասնամեակ նոյնանուն առարկայի դասաւանդման շրջանակում կատարուած դասախօսական աշխատանքի»: Ի սկզբանէ ան նշած է, թէ ուսումնասիրութեան մէջ առարկային վերաբերեալ բազմազան կարծիքները պահպանած է, իսկ «վերջնական պատասխաններ չունեցող հարցերի վերաբերեալ»՝ համադրած է «առաւել յայտնի մօտեցումները»:

Ապա «Նոր Կտակարանի Ներածութիւն» Դասընթացի Մասին՝ բացատրական գրութեամբ յայտնած՝ թէ նպատակ ունեցած է «օգնել ընթերցողին՝ ըստ հնարաւորինս լիարժէքօրէն եւ խորութեամբ հասկնալու քրիստոնէական սուրբ գրութեանը, ճանաչելու Յիսուս Քրիստոսը, ընթանելու այն Բարի լուրը՝ Աւետարանը, «որով մարդ արարածը պիտի հասնի յափտենական կեանքի՝ փրկութեան»:

«Հակիրճ Նախաբան» մը ես՝ կանխող գիրքին առաջին մասը, որ առնուած է «Ընդհանուր Ներածութիւն» անուն մէջ: Երկրորդ մասը՝ «Մասնաւոր Ներածութիւն» անունով: «Հակիրճ Նախաբան»ը վերնագրութիւն ունի՝ «Նոր Կտակարանի Գրքերի/Հեղինակները եւ Բովանդակային Բաժանումները»:

Ա. Մասը նախ եւ առաջ կը բացատրէ Նոր Ովստ, Նոր Կտակարան եւ Աւետարան անուանումները: Կ'անցնի Նոր Կտակարանի լեզուի՝ որ ամայնական «կոյնէ»ն էր: Յիսուս արամերէնով խօսած, քարոզած եւ ուսուցանած էր: Բայց Նոր Կտակարանի բովանդակութիւնը գրուեցաւ «կոյնէ»ով, որպէսզի թէ՛ իրենց մայրենին կորսնցուցած հրեաները, եւ թէ հեթանոսութենէ քրիստոնէութեան յարողները հասկնային Բարի լուրը:

Յաջորդաբար գրած է ՆԿԻ հնագոյն ձեռագիրներուն, Աստուածաշունչի հնագոյն թարգմանութիւններուն (ասոնց մէջ՝ հայերէն թարգմանութեան), ՆԿԻ կանոնին, պարականոն գրականութեան, Յիսուսի օրով աշխարհաքաղաքական վիճակին, Հրէաստանի մէջ հռոմէական կառավարիչներուն, հրէական 66-73 թուականներու մեծ ապստամբութեան, կրօնական եւ քաղաքական խմբակցութիւններուն մասին: Ասոնցմէ ետք՝ առաջին դարու մեսիական ակնկալութիւններուն, Յիսուսի եւ քրիստոնէութեան մասին արտա-քրիստոնէական աղբիւրներուն, եւ որով աւարտած է Ա. Մասը:

Բ. Մասը՝ «Մասնաւոր Ներածութիւն»ը կը բովանդակէ հետեւեալ գլուխները. «Չորս Աւետարանների Համառոտ Ներածութիւն», «Մարկոսի Աւետարան» (աւետարաններու շարքին այս երկրորդ գիրքը նախադասած է, որովհետեւ բանասիրութիւնը ընդունած է, թէ գրուած է միւս աւետարաններէն առաջ), «Մատթէոսի Աւետարան», «Լուկասի Աւետարան», «Համատեսութիւն» (այս գլուխը՝ բացատրելու որ Մարկոսի, Մատթէոսի եւ Լուկասի աւետարանները շատ նմանութիւններ ունին), «Յովհաննէսի Աւետարան» («Յովհաննէսի աւետարանը համատես աւետարաններից տարբերում է թէ՛ լեզուով, թէ՛ ոճով եւ թէ՛ դատողութիւններով ու գաղափարներով, ընդհանրապէս», գրած է), «Գործք Առաքելոց» (սա Լուկասի երկրորդ գիրքն է, շարունակութիւնը անոր աւետարանին), «Պողոս Առաքեալ», «Պողոս Առաքեալի Նամակները» (անոնցմէ իւրաքանչիւրին մասին գրած է՝ ըստ անոնց գրառման թուականի կարգին դասաւորելով): Երբայեցիներուն գրուած նամակին վերաբերեալ՝ «Պողոս առաքեալի՝ Եբրայեցիների ուղղուած նամակի հեղինակ լինելու առնչութեամբ առկայ կասկածների պատճառով, ներկայիտ կանոններում այն Պողոս Առաքեալի նամակների շարքում դրուած է ամենավերջում եւ վերնագրուած է "Թուղթ Եբրայեցիների"» առանց Պողոսի անունը նշելու»: Ապա «Ընդհանրական Նամակները» գլուխը եւ Պետրոս Առաքեալի Ա. եւ Բ. Նամակներուն մասին, Յովհաննէս առաքեալի Ա. եւ Բ. Նամակներուն մասին, Յուդա առաքեալի՝ նամակին (այս Յուդան՝ Իսկարիովտացին չէ, այլ ըստ ուսումնասիրողին եզրակացութեան՝ Յուդա Տեսանեղբայրը): ՆԿԻ վերջին գիրքը Յովհաննէսի Յայտնութիւնն է: Ուսումնասիրողը ակնարկելով այս գրքի հեղինակին վերաբերեալ բանասիրական հարցերուն, եւ հիմնուելով չորրորդ աւետարանի եւ այս գրքին բովանդակային եւ լեզուա-ոճական նմանութիւններուն վրայ՝ Յայտնութեան գրող տեսած է նոյնինքն Յովհաննէս առաքեալը: Եւ քանի «Յովհաննէսի Յայտնութիւն»ը ժամանակակից կրօնական տրամադրութիւններուն մէջ մեծտեղ ունի, կը քաղեմ երկու հատուած.

1) «Մեր ժամանակներում մարդիկ վախով են ընթերցում այս գիրքը, ինչն անշուշտ սխալ պատկերացումների եւ թերահաւատութեան արդիւնք է: Առաւել մեծ ուշադրութիւն է դարձում Աստծոյ պատիժներին, քան պատգամին (...) մեզ համար առաւել կարեւոր պիտի լինի ո՛չ թէ այն, թէ ինչ է լինելու Երկրորդ զայստեան ժամանակ, այլ թէ Աստուած Արքայութեան մէջ ինչ է պատրաստել արդարների համար»:

2) «Յայտնութեան գիրքը երկար ժամանակ ՆԿԻ կանոնից դուրս է մնացել: Պատճառն այն էր, որ կասկածի տակ էր դրուում դրա առաքելական հեղինակութիւնը (...): Արեւմուտքը աւելի վար ընդունեց Յայտնութեան սուրբ գիրք լինելու իրողութիւնը եւ սկսեց կիրառել եկեղեցական ծիսակարգին մէջ: Արեւելքում, սակայն, Յայտնութիւնը ընդունելութիւն գտաւ դժուարութեամբ: (...) Յայտնութեան գիրքը հայերէն է թարգմանել Ներսէս Լամբրոնացին 12-րդ դարում միայն, որից յետոյ այն աստիճանաբար ներառուել է Աստուածաշունչ մատեանի հայերէն թարգմանութիւններում: Սակայն պէտք է նշել, որ (...) Հայ Առաքելական Ս. Եկեղեցու ծիսակարգում նրանից ընթերցումներ չեն կատարում»:  
Ծանօթացման այս գիրքը գովելի ուսումնասիրութիւն մըն է ի պէտս անոնց՝ որոնք նախագիտելիք կը փափաքին ունենալ:

Գտնիկ Ասազ Քահանայ

### NORA'S GUIDANCE

When you forgive, you heal.

When you let go, you grow.



Ազգային Առաջնորդարան  
Armenian Prelacy of Canada  
Prélature Arménienne du Canada



514-856-1200  
prelacy@armenianprelacy.ca  
www.armenianprelacy.ca



խմբագիր՝ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վրդ. Եազուպեան  
3401 Olivar Asselin Montréal, Quebec H4J 1L5

## 4 Syrian-Armenians confirmed dead in Aleppo in earthquake

YEREVAN—4 Syrian-Armenians were killed in the devastating earthquake in Syria according to latest information, Hovhannes Alexanyan, the Head of the Strategy Development Department at the Office of the High Commissioner for Diaspora Affairs of Armenia told Armenpress.

“As of this moment we have four victims who died in Aleppo. There are injured people also, we have no clear number now,” Alexanyan said.

Armenian organizations are now conducting a monitoring to assess damages.

In Turkey, the Holy Forty Martyrs Armenian Church in Iskenderun suffered heavy damages, he added.

One of the strongest earthquakes to hit the region in a

century shook residents from their beds at around 4 a.m. on February 6, sending tremors as far away as Lebanon and Israel. A second earthquake almost as strong as the first one followed some 7 hours later.

The epicentre of the first 7.8-magnitude quake was 23 kilometers (14.2 miles) east of Nurdagi, in Turkey’s Gaziantep province, at a depth of 24.1 kilometers (14.9 miles), CNN reported citing the United States Geological Survey (USGS).

Less than 24 hours after the first quake, on February 7, Turkey had reported that at least 3,381 people have died, while the estimates from Syria are more than 1,500 victims, both in government and rebel-held areas. It is expected that the final tally would be much higher.

## Aurora Humanitarian Initiative hosts workshop with AUA

YEREVAN— On January 26, the Aurora Humanitarian Initiative, in conjunction with the “Scholae Mundi Armenia” Charity Foundation and the American University of Armenia (AUA), hosted a workshop that brought together students and alumni who are current and past recipients of the Aurora Scholarship, as well as representatives from various humanitarian organizations. The keynote speaker was 2022 Aurora Prize Laureate Jamila Afghani, an activist for women’s rights and education in Afghanistan and founder of the Noor Educational and Capacity Development Organization. In this challenging world, the need for leaders espousing and exemplifying humanitarian values is critical. As such, AUA is grateful for the ability to collaborate with its partners at the Aurora Humanitarian Initiative and Scholae Mundi in order to educate the next generation and inculcate in students these peace-building skills.

Dr. Vahram Ter-Matevosyan, assistant to the AUA President on Academic Affairs, opened the event by introducing the Aurora Humanitarian Initiative, a philanthropic vision of Vartan Gregorian, Nubar Afeyan and Ruben Vardanyan. Through this initiative and on behalf of the survivors

of the Armenian Genocide and in gratitude to their saviors, the descendants of the Genocide survivors have transformed their gratitude into action by supporting various educational initiatives, including student scholarships, grants to humanitarian projects, and promoting public awareness of humanitarian efforts.

Since 2017, in cooperation with Scholae Mundi Armenia, the Aurora Humanitarian Initiative has sponsored the Aurora Gratitude Scholarship, which enables students holding citizenship in Syria, Iraq, Lebanon, Jordan, Egypt, Russia, Georgia, Artsakh and Iran to study at AUA by either partially or fully covering the tuition fees. The scholarship was established in order to promote humanitarian values, which play a paramount role in our increasingly globalized world and are critical for university students, who will take on leading positions in society in Armenia and neighbouring countries. Since the inception of the scholarship, the initiative has provided financial support to 69 students pursuing both bachelor’s as well as master’s degrees at AUA, 20 of whom are currently enrolled.

*Continued on page E2*

## Azerbaijan cuts off gas supply to Artsakh again

STEPANAKERT—Azerbaijan has again blocked the only pipeline delivering gas from Armenia to Nagorno Karabagh (Artsakh), the NKR InfoCentre reports.

Artsakhgaz said the people of Artsakh are deprived of natural gas as supplies have been suspended.

Azerbaijan has been regularly cutting off natural gas supplies to Artsakh amid freezing temperatures and severe

food shortages.

Since December 12, the sole road connecting Artsakh to Armenia — the Lachin (Berdzor) Corridor — has been blocked by self-described Azerbaijani environmentalists. Artsakh residents have reported food and fuel shortages, while hospital patients don’t have access to essential medicines, with only a handful allowed transfer to facilities in Armenia proper.

## Artsakh state representatives testified in Parliament

### ANCC STATEMENT ON THE FOREIGN AFFAIRS COMMITTEE HEARING ON ARTSAKH’S BLOCKADE

OTTAWA — On January 25, 2023, the House of Commons Standing Committee on Foreign Affairs and International Development convened two separate meetings on Azerbaijan’s ongoing blockade of Artsakh.

The meetings were organized following the previous week’s unanimous passage of a motion presented to the committee by Bloc Quebecois’ Shadow Minister of Foreign Affairs, Mr. Stéphane Bergeron, which called for a maximum of three meetings, during which the committee would have the opportunity to hear from witnesses representing the Republic of Artsakh, as well as experts and community representatives.

This was a historic achievement, considering that for the first time, it provided an opportunity for Artsakh state representatives to appear in front of the Canadian Parliament and make the case for the 120,000 besieged Armenians of Artsakh and their struggle to live as they choose.

During the first meeting, ANCC’s Co-President Shahen Mirakian appeared alongside Dr. Taline Papazian (Lecturer at Sciences Po, École de l’Air), Robert Avetisyan (Republic of Artsakh’s Permanent Representative to the US & Canada) and Gegham Stepanyan (Human Rights Defender of the Republic of Artsakh). During his testimony, Mirakian provided the committee with a comprehensive understanding of where Armenian Canadians stand on this issue, emphasizing the need for Canada to use its considerable international influence and pressure Azerbaijan to end its genocidal blockade of Artsakh and deter Baku’s ethnic cleansing campaign in the region. Dr. Papazian provided testimony related to the geopolitical context of the ongoing situation and offered recommendations on how Canada can

help end the latest humanitarian catastrophe orchestrated by Azerbaijan.

Artsakh’s Permanent Representative to the US & Canada, Robert Avetisyan and the Republic’s Human Rights Defender, Gegham Stepanyan, made excellent presentations, providing committee members with real facts from the ground related to the grave humanitarian consequences and the geopolitical implications of Azerbaijan’s genocidal aggression as well their policy priorities and vision for a free and independent Artsakh.

The second meeting of the committee heard from Olesya Vartanyan (Senior South Caucasus Analyst at the International Crisis Group), as well as Professor Christopher Waters (Professor of Law at the University of Windsor). Both witnesses shared grounded information on the ongoing situation in Artsakh, calling for an end to Azerbaijan’s destabilizing efforts and for increased international pressure to find a fair and permanent resolution to the conflict. During the second meeting, additional witnesses who appeared in front of the committee spared no effort to disseminate state-sponsored propaganda, unashamedly denying the suffering of the 120,000 innocent Armenians of Artsakh. Both witnesses were thoroughly questioned by committee members and at times, their foreign-sponsored talking points were pointedly exposed.

The Armenian National Committee of Canada thanks committee members for their ongoing advocacy and leadership on this important issue and remains committed to continuing nationwide advocacy efforts to end Artsakh’s blockade and ensure that their voices are heard in the pursuit of a free and independent Artsakh.

## Thousands of Artsakh Armenians unemployed due to Azerbaijan’s blockade

STEPANAKERT—At least 5,000 people have become unemployed due to the ongoing blockade of Artsakh by Azerbaijan.

The government of Artsakh announced last week that it would implement social and financial programs to aid the thousands of people who have lost their incomes and keep remaining businesses open. The government said it would provide financial support to individuals who have lost their jobs since December, including payments for each of their children. It would also offer financial assistance to entrepreneurs to pay their workers’ employees and sustain their businesses.

“We are doing our best to provide support so that jobs will be preserved,” Artsakh State Minister Ruben Vardanyan said on February 1 during a daily meeting of the operational headquarters launched in response to the blockade. “Unfortunately, many people have lost their jobs. Through these programs, we will do our best to support both businesses and citizens who are in difficult social conditions.”

Artsakh has been under blockade since December 12. For over 50 days, Azerbaijani protesters sponsored by the government have closed the Lachin Corridor, the sole route connecting Artsakh and Armenia. The region has not received imports of food or medical supplies. Gas, electricity and internet connectivity have also been periodically disrupted, leaving residents without heating or fuel for their vehicles. The gov-

ernment of Azerbaijan has denied that the Lachin Corridor is closed to travel.

The natural gas supply to Artsakh has been cut off at least four times since the start of the blockade. Artsakh receives its gas through a pipeline that runs through Azerbaijani-controlled territory. Artsakh authorities accuse Azerbaijan of deliberately disrupting the gas supply.

Schools in Artsakh were closed on January 19 due to a lack of proper heating amid freezing winter temperatures. After the gas supply was partially restored on January 30, authorities said that schools would reopen “assuming the gas supply remains uninterrupted.” If the gas supply is cut off again, only high school level classes will resume. Over 20,000 school-age children were unable to attend school while the region’s 118 schools were closed.

The high voltage power line that provides Artsakh’s electricity supply from Armenia has also been damaged since January 9. Artsakh authorities say that Azerbaijan has prohibited repair crews from accessing the power line, which runs through Azerbaijani-controlled territory.

Due to the simultaneous closure of the gas pipeline and power line, many Artsakh residents have been relying on firewood to heat their homes. The Artsakh government announced last week that it has started providing residents with wood-burning stoves. As of January 27, 26 stoves and 346 cubic meters of firewood have been distributed among 135 residents, according

to official data.

Meanwhile, hundreds of families have been separated by the blockade, as people traveling to Armenia were stranded along the Lachin Corridor when it was closed. The International Committee of the Red Cross (ICRC) escorted 15 children on January 28 and 19 more people on January 30 to Artsakh from Armenia to be reunited with their families. Only the ICRC and Russian peacekeepers have been occasionally permitted to travel along the corridor.

Vardanyan, who assumed power as Artsakh State Minister in November 2022, has been resolute that Artsakh will never accept a status within the borders of Azerbaijan.

“If we want Azerbaijan to fail in its plans to depopulate Artsakh of Armenians, we have only one option, which is to clench our teeth and move forward. And we can only do that by coming together,” Vardanyan said while speaking with residents of the Artsakh capital Stepanakert on January 31.

During a weekly cabinet meeting on January 26, Armenian Prime Minister Nikol Pashinyan urged the leadership of Artsakh to exercise “restraint” in order to preserve ongoing negotiations on a peace deal with Azerbaijan.

Pashinyan said that Azerbaijan hopes to “disrupt the peace agenda” and “incite a new war in the region.” He appealed to the Armenian authorities of Artsakh to tone down their rhetoric in order to protect the peace process.

*(The Armenian Weekly)*

## A Mari Usque Ad Mare

### CANADA INVESTS IN CLEANER TECHNOLOGIES FOR THE BETTERMENT OF CANADIANS

In a recent announcement made by Parm Bains, Member of Parliament for Steveston – Richmond East, on behalf of the Minister of International Development and Minister responsible for the Pacific Economic Development Agency of Canada (PacifiCan) Harjit S. Sajjan, a \$5.2-million funding was announced that will come through PacifiCan, including an additional \$2.3-million from the Province of BC, for Foresight Canada. This newly announced and allocated funding will be used by Foresight Canada and will see the establishment of the BC Net Zero Innovation Network (BCNZIN).

“The world is moving towards cleaner technologies and Canada has the opportunity to be a true global leader—creating good jobs for Canadians while helping the world meet climate change and other environmental goals. PacifiCan’s support for this project with Foresight Canada is an important step in creating environmental solutions here in B.C.,” said Minister Sajjan.

Adam Walker, Parliamentary Secretary for the Sustainable Economy, said: “A sustainable, clean economy for our future is a priority for all British Columbians, but developing and launching the necessary technology can be a challenge for businesses, researchers and innovators. To tackle this, a new Net Zero Innovation Network will help support the adoption and growth of cleantech in B.C. This will help to meet our greenhouse gas reduction targets, drive economic growth, and enhance industrial competitiveness, positioning B.C. as a global leader in clean energy technology.”

### HOUSE OF COMMONS ADOPTS LEGISLATION FOR A CANADA DISABILITY BENEFIT

With the cost of living rising more and more vulnerable groups are becoming affected. Working-age Canadians with disabilities, a study shows, are also twice as likely to live in poverty, and this is why the Federal Government has been working on a new program called the Canada Disability Benefit (CDB). This new benefit has the potential to become a substantial help for persons with disabilities.

In a recent press statement, the Minister of Employment, Workforce Development and Disability Inclusion Carla Qualtrough announced that Bill C-22, that carries the legislation for a new Canada Disability Benefit, has passed the third reading in the House of Commons and was unanimously adopted. This now brings it one step closer to finalizing the benefit. Bill C-22 will now move to the Senate for consideration and will be sponsored by Senator Brent Cotter.

“I am both proud and honoured to be the sponsor for Bill C-22 in the Senate. The creation of a Canada Disability Benefit that will support so many Canadians is an historic achievement that will significantly further our country’s goal to be fully inclusive to all,” said Senator Brent Cotter.

Minister Qualtrough said, “With Bill C-22, we have a once-in-a-generation opportunity to create a new benefit that will lift many working-age Canadians with disabilities out of poverty. I’m looking forward to working with my colleagues in the Senate to keep the momentum up. In Canada, no person with a disability should live in poverty.”

### CANADA INVESTS \$300,000 FOR SANIKILUAQ’S MULTI-PURPOSE COMMUNITY RESEARCH CENTRE

The Belcher Islands of Nunavut located in the Hudson Bay are a very important part of the ecology of Canada. The islands are home to a variety of unique wildlife such as the Eider Duck. The Belcher Islands is also a major cultural site for the Inuit and also the community of Sanikiluaq. In a recent press statement made by the Minister of Northern Affairs, PrairiesCan and CanNor Dan Vandal, it was announced that the Government of Canada will be investing approximately \$300,000 into a new initiative to further support the ongoing expansion of the Arctic Eider Society’s multi-purpose community research centre.

The Arctic Eider Society, that is located on Belcher Island, is an Inuit run not-for-profit organization that has dedicated its efforts to continued support of Inuit-led conservation efforts of Belcher Island’s unique ecosystem.

The organization will be seeing long-term support for its community, by prioritizing the development of local jobs to not only help there economy but create jobs that are highly important in developing in regards culture and environmental protection, especially for future generations.

